



ԹԻԻ 4

ՏՆՕՐԷՆ-ԻՄԱՐԱԳՐԱԳԵՏ

ՄԻԲԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՋԵԱՆ

23 Յունվար 1899

“Մասիս,, ի խնդրագրութիւնը կ'ուզէ գիտնալ
 հասցեները այն բոլոր դպրոցներուն, որոնք գիշդակ-
 ներու, գաշառակներու, աղքատիկ քաղերու մէջ կը
 գտնուին, եւ հոն գտնուող ուսուցիչներն ալ նիւթապէս
 կարող չեն բաժանորդագրուելով քերթիս քիւերն առանալու:

Թ Ի Ի 4 . Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս եր. ճարտարները

ՄԻՔԱՅԷԼ, ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Հակագղեցութիւնը

ԿԱՐՈ

ԴԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ

Արուստագետը եւ Քննադատը

ՀԱՆՐԻ ՊԻՏՈՒ

Մտաւորական շարժումը Հարաւային

Ամերիկայի մէջ

Խոմեր

ՍԿԵՊՏԻԿ

ԴԻՏԱԿԱՆ ԻՋԵՐ

Խենդերուն ծիրախտը

ՏՈՔԹ. Պ. ԲՕԼՕԼԵԱՆ

Դերասանութիւն (վեպ)

ԷԵԻՈՆ ՊԵՂԲՈՍԵԱՆ

Լերան Հովուութիւն

ՎԱՐԳ-ՄԵԼԻՔ

Դաշնակը

ԿԱՐՈ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ

Պէտք է որ գրագետները ամուսնանան

Է. Ճ. ՀԱՐՏԻ

Տնտեսական կեանք եւ միջազգային բաղա-
 րականութիւն Մ. Շ.

Թերթիս կողքին վերջի երկու երեսները ազդարարու-
 քիւններու շտովացուած են: Գիւններու համար դիմել Տնո-
 րէնին, Սքանկոյ, Պապը Այի ձառտեալի քիւ 20:

ՄԱՍԻՆ

ԿԻԱՆՔԱԵԱՅ  ԳԱՆԴԵՍ

48^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 4

ՆՈՐ ՇՐՋԱՆ


23 ՅՈՒՆՎԱՐ 1899

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ

(1825 - 1899)

Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մամուլը մասնակցեցաւ աշխարհի ծանօթ գիւտնագէտներէն մէկուն Նուպար Բաշայի կորուստի սուգին, այս առթիւ ի վեր հանելով անոր գիւտնագիտական կարողութիւններն ու ծրագիրները գործադրելու համար ունեցած կամքի տոկունութիւնը:

Երեսամեայ « Մասիս » ի խմբագրութիւնն ալ կը մասնակցի ընդհանուր սուգին, յանձին Նուպար Բաշայի ամէնէն աւելի մարդասէր անձնաւորութիւն մը կեանքէ բաժնուած ըլլալուն համար եւ կը մաղթէ որ Նուպարեան գերդաստանը լեցնէ գէթ մարդասէրի այն պակասը որ կը բացուի Նուպար Բաշայի մահուամբ:



ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ

Մ Ի Ք Ա Յ Է Լ, Ե Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն



ԲԵՐՈՒ անծա-
նօթ սկզբնաւո-
րութենէ մը ի
վեր, որյաւխտե-
նականի մշու-
ներուն մէջ կը
կորսուի և ո-

րու շարունակութիւնը ուղտերու կարա-
ւանի մը պէս յամբ ու դանդաղ կ'ըն-
թանայ, իրեն հետ տանելով մարդիկը,
չը գիտցուիր ինչպէս, օր մը ԲԱՆՏԸ ներս
սողոսկած է մարդկութեան մէջ, ու
անծանօթ էութեան մը անըմբռնելի
սկզբունքներով, երջանկութեան զգլխիչ
զրոյցներ կը փսփսայ ամէնուն ա-
կանջներն ի վար, և քիչեր միայն,
որոնք իր անունով երջանիկները, բախտա-
ւորները կը կոչուին, հասկցած են անոր
հմայքը:

Մարդկային բոլոր դործողութիւն-
ները կը ձգտին, հասնելու համար
Բախտին, ճանչնալու համար իրեն հը-
մայքները: Բախտի շնորհներուն տի-
րապետելու համար մարդիկ ամբողջ
կեանքերին կը դնեն իրենց դործելուն
մէջ, որպէս զի անդամ մը «բախտը

ժպտի իրենց», ու յետոյ բախտին ժը-
պտը տեսնողները, կեանքի կռուին
մէջ յաջողածները, կը սկսին վայելել
աշխարհը, ու բախտն ալ իբրեւ պահա-
պան հրեշտակ, միշտ անոնց գլխուն վե-
րեւ կը թեւածի:

Իսկ չի յաջողածները կան անդին,
տխուր էութիւնները, որոնցմէ «բախտը
երես դարձուցած է»: Այլ ամէն ջանք
ի զուր է, անոնք դատապարտուածներն
են, անժառանգները, զրկուածները և
կեանքի կռուին ատեն, իբրեւ սխերմ
թշնամի մը բախտը կը հայածէ զիրենք,
որոնք առանց վայելքներու կեանքի
մը, համակերպած, իրենց դժբախտու-
թեան օրերը կ'անցընեն արեւին տակ:

* * *

Վաղընջական ժամանակներու մէջ
խուժաններու միամիտ հոգեբանութիւնը,
որ բնական պէտքի մը անսարով ծնունդ
տուած է դիցաբանութեան, չաստուա-
ծացուցած է նաեւ այն բոլոր դերադոյն
ոյժերը որոնք ընկերութիւնները կը վա-
րեն, և որոնց ազդեցութեան տակ ան-
հատները կը ճգմուին կամ կը փառաւոր-
ուին: Հին օրերէ ի վեր ժողովուրդնե-
րու երեւակայութեան մէջ բախտն ալ
եղած է մին այն չաստուածներէն, որոնք
չեւ դիտեր ինչո՞ւ դոյութիւն ստացած

են, և չենք գիտեր թէ մինչեւ ե՞րբ պիտի տեսէ իրենց ամենակարողի էութիւնը :

Մարդուն այն միամիտ հոգին, որ հին ժամանակներուն, դիցական էակներ կը թռչնէր օդին մէջ, ու անոնց թեւ թափներուն յանդիման պաշտամունքի երկրպագութիւնը կ'ընէր, հիմա փոխուած է բոլորովին ժամանակակից մարդուն մէջ միտքը հոգիէն աւելի խրտուռն, իրողութիւններու շարքին պատճառը կ'որոնէ, ու իրական աշխարհն ալ՝ երեւակայականէն աւելի հարկեցուցիչ(imposant) իր օրը օրին տալտուկներովը ծնունդ կուտայ առանց պաշտամունքի լոկ նիւթական կուռքերու գոյութեան :

Հին ժամանակներու մէջ բախտաւորներն էին նախանձելիները, այն մեծատունները, փարթամները : Ժամանակակից կեանքը դրամատէրները ստեղծած է, մամոնայի երկրպագուները :

* * *

Այս սողերէն վերջը, որոնք մանաւանդ մեր հարուստներու մեծագոյն մասէն թերեւս չի հասկցուն, հիմա սկսինք խօսիլ մեր հարուստներուն վրայ, քանի որ տօնական օրերը անցած են, և զգուշաւոր միջոցներու դիմելու պէտք չի կայ մեր հարուստներուն բարեպաշտիկ զգացումները վիրաւորելու երկիւղով :

Մեր բոլոր հանրային գործերուն մէջ արդէն հանրութեան զանազան մասերու անհատական «եռ»երը կը պակսին : Ու նաեւ ամէն դասակարգ, կամ վիճակակիցներու խումբ մը որ և է կերպով չի կապուիր իրմէ տարբեր դասակարգերու, վիճակակիցներու խումբերուն հետ, և մեր հասարակութիւնն ալ մասերու անջրպետներով կազմուած այն անկապ ամբողջութիւնն է, որ օրէ օր կ'իյնայ, օրէ օր կը տկարանայ, կորսնցնելով իր կենսականութիւնէն : Պառակտումը եղած է քրոնիկ հիւանդութիւն մը մեր հանրային գործերուն

մէջ : Կրօնականները հետզհետէ կը հեռանան աշխարհականներէն, հովիւները կ'օտարանան իրենց հօտերէն, ժողովուրդը կը պաղի եկեղեցիէն : Իրողութիւն է որ զանազան դաւանանքները նոր խրամատներ կը բանան ազգակիցներու միջեւ, իրողութիւն է որ ամէն դասակարգի մանաւանդ կարող անհատներ իրարու միջեւ նորանոր խոչընդոտներ կը ստեղծեն, իրարմէ անջատ եսապաշտ գոյութիւն մը ապահովելով իրենց համար, ու այս ամէնէն վերջ իրողութիւն է նաեւ որ մեր հարուստները՝ ազէտ իրենց բոլոր պարտաւորութիւններուն, մեր հասարակութեան միւս մասերէն զատուած, առանձնակեացի կեանք մը ունին :

Մեր վերքերուն ամէնէն խորունկը արդէն, ա՛յն թերեւս, ուրկէ միւս վերքերը յառաջացած են, կրթութեան պակասութիւնն է մեր հասարակութեան մէջ : Մտքով ճշմարտապէս զարգացած եկեղեցականներ, հանրային գործիչներ, արհեստավորներ, վաճառականներ եւ հարուստներ նաեւ ճշմարտապէս զարգացած սրտեր պիտի ունենային, ու այն բոլոր պարտաւորութիւնները որոնք այսօր երեսի վրայ ձգուած են, համոզուած խնամքներու առարկայ պիտի ըլլային, ու մեր հասարակութիւնն ալ այսօր քաղաքակրթական աւելի բարձր մակարդակի մը վրայ կարող պիտի ըլլար գտնուիլ : Չարգացած, մարդկայնացած անձերու սկզբունք մը կ'ընէ թէ « շատ գիտնալը շատ ներդաւիտ կ'ընէ : » Մենք արդէն ընադդական, զուտ նիւթական կեանքի մը վարժուած, հեռու ենք հասարակութիւն մը զարգացնող առողջ գործունէութեան մը սկզբունքները ըմբռնելէ : Մարդ՝ ճշմարտապէս կը տխրի լսելով Ուսումնական Խորհուրդի անդամի մը բերնէն այն յայտարարութիւնը թէ « այլեւս հայերէն թերթերը չպիտի կարգայ :

որովհետեւ անոնք Ուսումնական Խորհուրդին դէմ կը գրեն:» Ու հիմակ ալ ուրիշ եղանակ մըն է որ սկսած է զարնուիլ: Ռէթէոս Պէրպէրեան, որուն մատուցած կրթական ծառայութիւնները ուրացողներէն չենք, շաբաթ մը առաջ ԱՐԵՒԵԼՔԻ մէջ հրատարակած յօդուածով մը կը գանգատէր թէ նորերը 'գոհ ըլլալ չեն գիտեր, ու կը դժգոհին ամէն բանէ, միայն դժգոհած ըլլալու համար: Մեր անկեղծ ցանկութիւնն է որ իր յորդառատ լաւատեսութիւնը չի փոխանցուի նորերուն, որոնք պատճառ մը չունին մեր ինկած պայմաններուն մէջ գոհացումը դանդու: Ու յետոյ յայտնի է թէ վերոյիշեալ պարագաներուն մէջ, դժգոհութիւնը, կենսունակ յոռետեսութիւն մը, յառաջդիմութեան գլխաւոր խայծերէն մէկն է:

* * *

Ամէն ժամանակի մէջ ճշմարիտ յառաջդիմութեան գործ մը սկսուած է մտքով զարգացածներուն և քսակով պարարտներուն իրարու ձեռք տալովը, ու այդ փոխադարձ աջակցութեան շարունակութիւնը միայն կարելի եղած է նաեւ աստիճանական զարգացում մը նպաստելու հասարակութեան մը համար: Եւրոպայի ու Ամերիկայի մէջ Բոֆօն ու Դրաճը իրարու միացած, հրաշքներ կը գործեն այսօր. իսկ մեր մէջը միտքն ու դրամը ամէնէն աւելի իրարմէ հեռու գտնուող տարրերն են, ու նորանոր խնջնդոտներ, այդ երկու գասակարդի մարդոց միջեւ եղած խրամատը միշտ աւելի կը լայնցնեն: Հիմա մեր բովանդակ ջանքը ըլլալու է իրարու մօտեցնել այդ երկու տարրերը, որոնց երկար առտենէ ի վեր իրարմէ անջատ ապրելը մեր հասարակութեան ամէնէն մեծ մոլութիւններէն մէկը սկսած է դառնալ: Միտքն ու դրամը այն տարրերն են, որոնց միութենէն կը ծնի «Խրք», ամբողջացնելով հասարակութեան մը համար

այն բարերար երրորդութիւնը՝ որով մարդկային խումբեր կրնան բարգաւաճումէ բարգաւաճում դիմել:

Ըսի արդէն որ մեր վէրքելուն աւմէնէն խորունկը մեր հասարակութեան առանց կրթութեան, անզարգացած մնալն է, որով ներկայ պայմաններուն մէջ միտքը ու դրամը ինչե՞ր չէին կրնար ընել, իրարու ձեռք տալով:

Մեր հանրային գործերու բոլոր ասպարէզներուն վրայ, այսօր ամէնուս գիտցած բանն է որ իրազեկ մարդոց սով մը ունինք: Հիւանդանոցը հիւանդապահներ չունի, դպրոցները ուսուցիչներ չունին, անօրէններ չունին, կրթական գործին համար մանկավարժները կը պակսին, արհեստները բարգաւաճ վիճակի մը մէջ չեն, ժողովուրդը ինքնազարգացման միջոցները չունի. ու այսպէս ընդհանուր թոհ ու բոհի մը մէջ ամէն մարդ իր ճամբան կ'երթայ, բոլորովին անտարբեր միւսի վիճակին, և մեր հասարակութիւնն ալ օրէ օր իր զարգացման գործէն կը տուժէ:

* * *

Կար ժամանակ մը որ մեր հարուստները եկեղեցիներ կը շինէին ու երբեմն ալ եկեղեցիին յարակից դպրոցներ. այս տեսակ բարերարութիւն մը, գերազանցն էր իրենց համար բոլոր բարերարութիւններուն: Իրա՛ւ ալ այն ժամանակ, երբ մեր հասարակութիւնը համեմատաբար աւելի լայն պայմաններու մէջ կ'ապրէր և կրթութիւնն ալ դեռ այնքան խոր կերպով չէր գնահատուած, ու ընդհանրապէս չէր մտածուեր թէ այն կեանքի կռուի ամէնէն զօրաւոր միջոցն է, կրօնական զգացումը ամէն տեղ բարերարութեան մեկնակէտը կը դառնար: Այսօր փոխուած են մեզ շրջապատող պայմանները, որով պէտք է փոխել նաեւ այդ պայմաններուն կառու-

ուած մեր գործունէութիւնը: Այն ժամանակէն մինչեւ այսօր ի՞նչ ըրած են մեր հարուստները. ո՛չ թէ փոխած են իրենց գործունէութեան եղանակը, այլ բոլորովին ջնջած դայն:

Մինչեւ ութսունական թուականները մեր հարուստները դրամական զոհողութիւններ կ'ընէին մեր հասարակութեան համար, գոնէ իրենց հասկըցած եղանակովը: Իսկ այսօր բարերարութեան գործունէութիւն մը կը պակսի մեր բարքերուն մէջ: Մովսէսի մը դաւազանը պէտք է թերեւս որ ապաւաններէն ջուր հանէ նորէն:

Անհատներու դժբաղդութեան ատեն յաճախ նկարագիրները կը կազմուին: Ու մենք որ ներկայ օրերուս, յարատեւ անկումի մը ենթարկուած ենք, պէտք է գիտակցինք մեր կացութեան ու առաջքը առնենք մեր անկումին:

Կովկասի հայերը զարգացման աւելի բարձր մակարդակի մը վրայ կը գտնուին այսօր քան թէ մենք, որովհետեւ այնտեղ համեմատաբար աւելի գիտցուած է միտքը և դրամը իրարու միացնել, հանրային բարերարութիւն մը ընելու համար: Կովկասահայ հարուստները այսօր բազմաթիւ երիտասարդներու ուսման ծախքերը կը հոգան որպէս զի անոնք բարձր զարգացում մը ստանալով վերագառնան, իրենց հետ բերելով քաղաքակրթութեան վերջին գաղափարները: Հարուստներու նուէրներովը և կտակներովը կը պահուին, նիւթական բարդուած վիճակի մը մէջ, երկուքէ աւելի բարձրագոյն ուսումնարաններ: Հրատարակչական ընկերութիւն մը, նորէն հարուստներու դրամովը կազմուած ու ապահովուած, օգտակար կազմակերպութիւն մըն է այսօր Կովկասի հայերուն համար:

Դալով մեր զարգացման հրապա-

րակին, շատ ախուր վիճակ մը կը ներկայացնէ այն: Կեդրոնական վարժարանը, մեր միակ բարձրագոյն կրթարանը այսօր, անգոհացուցիչ վիճակի մը մէջ է, որովհետեւ խնամակալութիւնը կը ջանայ անցելոյն մէջ եղած պարտքերը վճարել, եւ նիւթական միջոցները կը պակսին դպրոցը նորէն առաջնակարգ վիճակի մը մէջ դնելու համար: Տպագրութիւնը՝ հետզհետեւ դադրելու վրայ է մեզ համար քաղաքակրթական բարիք մը ըլլալէ, քանի որ կամաց կամաց հազուադէպ պարագայ մը կը դառնայ նոր գրքերու հրատարակութիւնը: Մեր երկրին տեղական պահանջները գոհացնելու համար մարդիկ կը պակսին, ձեռնարկութիւններու ատեն ոյժերու սովը մեզ կը յուսահատեցունէ, եւ մենք անկարող՝ ժամանակին հետ քայելու համար միջման անհրաժեշտ միջոցները ձեռքերնիս ունենալու, օրէ օր ձեռքէ կը հանենք մեր նախորդներու վաստկած ազդեցութիւնը ու միշտ կ'աղքատանանք: Թերեւս նիւթական յարատեւ աղքատացման արդիւնքն է որ մեր հարուստներն ալ հեազհետէ աւելի խնայող, աւելի ժխտ կը դառնան:

Բարերարութեան մասին, մեր հարուստներու այս խնայողութիւնը սակայն բոլորովին սխալ սկզբունքներու վրայ հիմնուած է, քանի որ ատով կարող չեն իրենց յարատեւ աղքատացման առաջքը առնել:

Մեր հարուստները պէտք է եռանդով սկսին ձեռք տալ ուրիշներու, մարդպատրաստելու գործին աջակցելով: Քանի՞ հարուստներ կան մեր մէջ որոնք իրենց ծախքով Եւրոպա զրկել ուզեն ընդունակ երիտասարդներ, որպէս զի անոնք այնտեղ ուսման կամ արհեստի մը հետեւելով, ապագային իրենց միջավայրը դարձած ատեննին, օգտակար անհատներ ըլլան:

Հարուստները ամէնէն օգտակար

դործը բրած կ'ըլլան նախ հասարակութեան ու յետոյ իրենց անձին համար. քանի որ իրենց հարստութեան պահպանումն ալ հասարակութեան օրէ օր բարգաւաճումէն կախում ունի, եթէ իրենց տղէտ անտարբերութենէն դուրս ելլելով չ'որս կողմերնին նային, ըմբռնելու համար թէ ի՞նչպէս կրնան աջակցիլ, որպէս զի մեր հասարակութիւնը յարատեւ անկումէ մը փրկեն:

Ատենն է որ սկսինք նոր դործունէութեան մը, դարմանելու համար մեր ինկած պայմանները. և հիմա որ հին օրերու մեր հարուստները ոչ եւս են, ու դադրած է նաեւ անոնց բարեբաղան հործունէութիւնը, պէտք է ունենանք նոր հարուստները որոնք ներկայ ժամանակին աւելի յարմար բարեբարութեամբ մը, յաջորդները ըլլան մեր ամիրաներուն:

Հին ժամանակներու մեր ամիրայական բարքերուն մէջ կրնամ ըսել որ կրթութիւնն ալ եկեղեցիին չափ, չա՛տ աւելի սիրուած էր քան թէ հիմա, և իւրաքանչիւր ամիրա իրեն համար պարտաւորութիւն սեպած էր իր թաղի դպրոցին պաշտպանը հանդիսանալ: Մեր նախակրթարաններու չէնքերէն կարեւոր մէկ մասին գոյութիւնը կը պարտինք այսօր մեր այդ վաղընջուց կրթասէր ամիրաներուն:

Եթէ տարրաւործումը ընենք մեր բարոյական անկումին, պիտի տեսնենք թէ ամէնէն աւելի իր պարտաւորութիւններուն անտարբեր դասակարգը հարուստներու դասակարգն է այսօր, այնքան սակաւթիւ բացառութիւններով, որ մարդ աւելի կը համակուի տխրութեամբ, տեսնելով որ անկումը ընդհանուր հարուստներուն վրայ կը ծանրանայ: Երբ հասարակութեան մը կարող դասակարգերը տխուր պայմաններ կը ներկայացնեն իրենց սրտի և մտքի դործունէութեան մէջ, այլ եւս այդ

հասարակութիւնը վիհի ճամբան բռնած է, և անխուսափելի է իր բարոյական կորուստը եթէ խոր անդրադարձում մը չ'ընենք չի կասեցնէ իր կորուստին մէջ:

Միտքը և դրամը, ամէնէն աւելի ներկայ օրերուն, իրարմէ բոլորովին անջատուած են մեր մէջ: Մեր ջանքը, աշխատութիւնը պէտք է ըլլայ հաշտեցնել այդ երկու տարրերը իրարու հետ:

Մեր հարուստները պէտք է բանան իրենց քսակները մտքին համար: Ամէն տեղ, ուր քաղաքակրթութեան ճշմարիտ պայմաններ ընկերութիւնները կազմած են, մտքի աշխատանքները եղած են ընդհանուր երկրի բարգաւաճման ամէնէն գլխաւոր լծակը, ու հարուստներն ալ ամէնէն մեծ սատարողները մտքի աշխատութիւններուն: Ինչպէս որ հարուստները մեր մէջ մասնակցութիւն մը չ'ունին մտքի աշխատութիւնները քաջալերող, այլ իրենց տղէտ, չա՛տ վաճառականի պոռոտ արհամարհանքին մէջ կ'ուզեն խեղդել ամէն ինչ որ մտքի արգիւնքն է, նմանապէս միտքն ալ, գէշ ինամուած խորթ գաւկի մը պէս տխեղծ, մասնաւոր կենսականութիւն մը ցոյց չի տար մեր մէջ:

Հարուստները պէտք է ամէն զոհութիւն յանձն առնեն միտքը պատրաստելու համար, որպէս զի միտքն ալ իր կարգին, երկրին, հասարակութեան զարգացման բոլոր աշխատութիւններուն մէջ ըլլայ այն ոյժը, որով բարգաւաճման ճամբուն մէջ յաջողութիւնները կը դիւրանան, ու ապահովուած յաջողութիւններէ վերջ, ընդհանուր քաղաքակրթութեան հետ քալելու համար, դործունէութեան նորանոր առաջարկներ կը բացուին հասարակութեան մը աչքին:

ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐՕ (Մալխարա)



ՆՈՆՔ որ դիտելու աչք ունին, նկատողութեան ասին անշուշտ բոլոր այն մասնաւոր պարագաները՝ որոնց ազդեցութեան տակ հայ հասարակութիւնը կազմող այլադաւան տարրերուն միջեւ ուրուագծուեցաւ համակրութեան ծանօթ շարժումը։ Դադաւիարն ինքնին այնքան բաղձալի ու համակրելի էր, որքան անոր իրազործումը, զայն երեւան բերելու ծառայող տարրերուն մէջ տիրող նախապաշարունակներուն ու մոլեռանդութեան խիստ զգացումին հետեւանքով, զրեթէ անկարելի։ Անոնք որ այս տեսակ զաղտփար մը դնահատելու լայն միտքն ու սիրաւ ունէին, ինչէր չպիտի տային զայն իրազործուած տեսնելու համար։ Գիտենք արդէն թէ կրօնքներն իրարու հետ չեն հաշտիր մանաւանդ իրենց ձեւակերպական կազմութեան տեսակէտէն։ Բայց որքան աւելի անհաշտութեան պարագան մենք միշտ շեշտուած կը տեսնենք՝ ազգայնութեան միեւնոյն անունին տակ ապրող հասարակութիւններուն մէջ։ Այսպէս, Հայու մը համար, կրօնական տեսակէտէն, միշտ աւելի հեշտ պիտի ըլլար ներողամիտ աչքով նայիլ Կաթողիկէ Ֆռանսաւցիին կամ Բողոքական Ամերիկացիին, քան դաւանութեան այդ ձեւով ապրող մի որ եւ է իր ազգակցին։ Ասի ընդհանուր երեւոյթ մըն է, մասնաւորապէս մշակուած ու շեշտուած ալլադաւան հասարակութիւններու իւրաքանչիւրը կրօնականօրէն, պաշտօնապէս ներկայացնող կղերին ձեւքով։ — այսինքն Եկեղեցիին իւրաքանչիւր բաժանումը խորհրդանշող պաշտօնական կազմակերպութիւններուն շնորհիւ։

Ուստի, միշտ ցաւով հաստատած ենք անտարակոյս ատելութեան այն անընկճելի

զգացումը, որ իրարու դէմ լարած է մեր ազգակիցներու զանազան դաւանութիւններուն պատկանող տարրերը։ Այս երեւոյթին ամենէն անշուշտ արտանշիչը չէ անշուշտ շատերու նոյն իսկ իրենց մայրենի լեզուն ու իսկուութիւնը ուրանալու պարագան զոր միշտ առիթ ունեցած ենք հաստատելու։ Անուշ ջուրի ձուկէ՛ր, — որքան շատ կ'արտադրէ անոնցմէ մեր միջավայրը։

Գիտենք թէ հասարակութեան մը հանրային կազմակերպութեան տեսակէտէն որքան ազդեալութիւն է որ զինքը կազմող զանազան տարրերուն համակրութեան առանցքն ըլլայ Եկեղեցին։ Աւելի՛ ուժով ու քիչ մը աւելի բանաւոր պատրուակներ կան՝ այլադաւան ու նոյնազգի հասարակութիւնները իրարու մօտեցնելու համար։ Դժբաղդութիւն մը եղած է մեզի համար այս վերջին պարագային պակասը հաստատել մեր մէջ։ Եւ երբ սկիզբէն մինչեւ այսօր հաշուի առնուէին թէ ինչեր չէ արժած մեզի պառակտումի այդ աւարկան, — Եկեղեցին — շատեր զատու պարտութեան անկեղծ ու արդարացի զգացում մը պիտի ծանրացնէին անոր վրայ։

Ժողովրդի հոգիին քննութիւնը եւ ուսումնասիրութիւնը կը սորվեցնեն սակայն մեզի թէ, անհաշտութեան եւ տոնելութեան այդ զգացումը բնական եւ ինքնաբերական զգացում մը չէ, այլ բացարձակապէս թելադրուած, ապաւորուած զգացում մը, որմէ կրնայինք ազատ ըլլալ, եթէ անդադար դէպ ի այն հրաւիրուած ու քշուած չըլլայինք մեզ առաջնորդողներուն՝ մեր կղերականութեան կողմէ։ Շատեր չպիտի բնորոշին գուցէ որ ներողամտութեան գերազանց այն կրօնքը, — Քրիստոնէութիւնը, իր ծոցին մէջ, մանաւանդ զինքը նախաժողովէն ներկայացողները, իրենաւ ատելութեան տարրեր պահած ըլլայ։ Բայց պէտք է նկատել թէ շատ անգամ կրօնքներն իրենց բանաւոր սկզբունքներէն բան մը չեն կրնար պահել, երբ կը մանեն անոնք ժողովուրդներուն մէջ, ըլլալու համար անոնց կենցաղին բարոյական ծխարանը։ Քրիստոնէութեան պարագան է առ գերազանցապէս՝ ներկայ ընկերութիւններուն մէջ։ Արդ, բանաւոր տեսակէտէն, կրօնքները երբեմն մեռած կ'ըլլան շատոնց, մինչդեռ իրենց նիւ-

թական շէնքերը կը յարատեւեն միշտ երկար տանն , Կրօնքը կը թուլանայ , բայց Քոնսթանդնուպոլսէն կը յարատեւէ , Թէ ինչո՞ւ այսպէս՝ ուսումնասիրութեան զատ նիւթ մըն է . ներկայ յօդուածին մէջ խնդրէ չեղում մը ենթադրել պիտի տար խօսիլ այդ մասին : Ըսենք միայն թէ , Ժողովրդի ծոցին մէջ Քաճաճայիմ մակարուծային դոյութիւնը աղահոլով կարգ մը պայմաններ՝ անհրաժեշտ են , — Ժողովրդի ներքին ու հանրական համերաշխութեան զաղափարին *réactionnaire* պայմաններ , Ահա՛ այդ պայմաններէն մին է որ քահանայն միշտ հոգ ունենայ վառ պահելու Ժողովրդի մոլեռանդութիւնը՝ հիմնուած դաւանութիւններու ծիսական տարբերութիւններու վրայ , սիրոյ սկզբունք ընելով միայն դաւանական միութիւնը : Այսպէս , Պատմութիւնը չցոյց կուտայ մեզի թէ , ամէն անգամ որ նոյնազգի հասարակութեան մը տարրերը , համերաշխութեան ընդոծին զգացումէն մղուած , կրօնական տխուր պատերուն վրայէն իրարու եզրայրութեան ձեռք կարկառել փորձած են , Կղերականութիւնը , իր գոյութեան ու յարատեւութեան իբրեւ տարրական պայման , հակազդեցութիւն մը անհրաժեշտ նկատած ու գործադրած ալ է : Շատերու մէջէն կրնանք յիշել զոր օրինակ Ժէ դարուն Ռեֆորմներու պարագան՝ Ֆրանսայի մէջ , Լուի Ժ-Ի լայն համբաւն ու Պօփիւէի մեծ անունը՝ այս օրուան պատմադիտութեան առջեւ չառ բան կը կորսնցնեն . բայց այսօր Պատմութիւնը Լուի Ժ-Ի չի դատապարտեր այնքան՝ իր թուլամորթութեան ու կրաւորական հոգիին համար , որքան պատասխանատու կը ձգէ Մօի հռչակաւոր արժիւը , — զոր այն արեւելահեղ հաւատաքնութիւններուն իբրեւ զլիաւոր քաջալերն ու յարգարէն կը դնենք :

Ես այս խորհրդածութիւններէն բեր Քաճաճայիմ այս հանգամանքին վրայ , անոնցմով կարենալ բացատրելու համար երեւոյթ մը՝ զոր վերջին ժամանակներս կը հաստատենք մեր մէջ , — վեղարներուն ազդեցութիւնը :

Ըսի արդէն թէ ամէնուն համար ալ ուրախ բան մըն էր անշուշտ հաստատել որ տեսակ մը համակրութեան հոսանք առաջ գալ սկսած էր իրարու նկատմամբ՝ մեր ազգի ալիսդաւան տարրերուն միջեւ :

Բայց ի՞նչ կը տեսնենք այսօր : Քաճաճայիմ , — վարդապետ , պատուեյի կամ բաթեռա , — իր գոյութեան պայմաններուն աւանդական հոգածու , այս երեւոյթին ներքեւ տեսակ մը սպառնալիք կը դուշակէ իր յարատեւութեան , ու կը միջամտէ ահա : Եկեղեցին չընդունիր որ ալիսդաւաններ , նոյն իսկ համազգի , իրարու մօտենան , հաշտուին իրարու հետ :

Այն ատենն է որ մարդորսութեան տխուր ձայներ կը լսուին դաւաճներուն խորէն , գործադրուած Կաթոլիկներու եւ Բողոքականներու ձեռքով : Այն ատենն է որ Հայ վարդապետ մը , հայաշատ դաւառի մը կեդրոնին մէջ , եկեղեցիի բեմէն կը բանադրէ բոլոր անոնք՝ որոնք իրենց զաւակը պիտի յանդգնէին զրկել Բողոքական մանկապարտիզպանութիւն մը մանկապարտէզը : Այն ատենն է որ եկեղեցիին բեմէն , այս միեւնոյն դարձած վարդապետը իր անէծքներուն ազդեցութիւնը կը փորձէ հայ ուսուցչի մը զլխին՝ որ զինքը Բողոքական օրիորդի մը հետ Լուսաւորչական պատկով պսակել հաւանած չըլլալուն համար , ամպարչտութիւնը գործած էր , առանց սակայն դաւանափոխութեան պարագայի , Բողոքական պատկով միանալ իր սիրածին հետ :

Հիանալի documentներ են ատոնք բոլոր : Բայց միայն հետաքրքրութեան անուանով զանոնք արձանագրել՝ չի բաւեր : Հակազդեցութեան դէմ , որ կը սկսի ահա՛ , աւելի թաւով ու աւելի հաստատուած հակազդեցութիւն մը պէտք է : Ո՞վ պիտի իրագործէ զայն : Մեր լրագրութիւնը : Մեռնիմ անոր փափկանկատ արեւին :

Բայց խնդիրը սօս կ'ըլլայ որ , ետ կ'երբանք , ու վեղարները աւելի ազդեցիկ կը դառնան :



ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ ԵՒ ՔՆՆԱԳԱՏԸ

ՀԱՆՐԻ ՊԻՏՈՒ



ՍԱՅՐ ֆուստայի քննադատ մը Fiérens-Gevaert, վերջերս կարեւոր ուսումնասիրութիւն մը հրատարակած է ժամանակակից գեղարուեստներու վրայ⁽¹⁾, որուն սկզբնաւորութեանը մէջ կը սահմանէ այն զանազան գեղարուեստական ուղղութիւնները, որոնք ծնունդ տուած են զանազան դասակարգի արուեստագէտներու: Արուեստագէտներ կան որոնք խոր կերպով կը յուզուին բնութեան տեսարաններէն: Ու այս խոր յուզումը՝ անոնց մէջ, որոնք ճակատադրային օրէնքով մը գեղարուեստական աշխատութիւններու առած են ինքզինքնին, կ'արժնայնէ տեսնել եւ ոյժը՝ իրենց զօրծնունդ մէջ վերարտադրելու համար այն կեանքը որ նախ իրենց հիացման առարկան եղած էր:

Եւ սակայն այն արուեստագէտը որ ներշնչման ինքնարուեստ անձնատուութեան մը առաւելութիւնները ունի՝ վերարտադրելու համար կեանքը իր խառնուածքին համեմատ, իր ժամանակակիցներուն եւ նախորդներուն հանդէպ մենաւորը, առանձնացողն է այն, նոր ոյժի մը բխման աղբիւր եւ չորս կողմ տարածուող ոյժերու կեդրոնը դառնալով, Հեղինակ մը կենդանի յստակութեամբ կ'արտայայտէ իր իմաստուն գաղափարները եւ շատ քիչ կը զբաղի հին սկզբունքներով: Իրեն յատուկ համեմատութեամբ մը իրարու կը միացնէ եւ իրարու մէջ կը ձուլէ փորձուած արտադրութեան մը մտածումները: Արդէն Ամիէլ, շատերէ վերջը, ինքն ալ ըսած է թէ մեծ մարդու մը միտքը այն միակ տեղին է, ուր կը խառնան ժամանակի մը բոլոր ծիւղն ոյժերը: Զօրա ալ սահմանած է գեղարուեստը իրեն « խառնուածքի մը մէջէն երեւցող բնութիւն » մը (la nature à travers un temperament): Գերմանացի նշանաւոր իմաստասէր Հէկէլ արուեստագէտներէն կը պահանջէ ամենէն առաջ կեանքի խորհուրդներուն արտայայտութիւնը:

Աչքերնուս առջեւ բերենք, օրինակի

(1) Essai sur l'art contemporain, par Fiérens-Gevaert.

համար նկարիչ մը որ մօտեկի մը կաղմուած-
քին համեմատ կը ներկայացնէ կեանքը իր
կտաւին վրայ : Ասով իր աշխատութիւնը կ'ե-
րեւայ թէ նմանողութեան մէջ սահմանա-
փակուած է : Իսկ իրականութեան մէջ, նկա-
րիչը երկար սովորութեան մը հետեւելով, ա-
ռանց անդրադառնալու, կը գծէ անվրէպ ան-
կիւններ եւ ի վեր կը հանէ ճշգրիտ համեմա-
տութիւնները : Բարդ ու չփոթ ընութեան մը
մէջ, կ'աշխատի անիկայ զատել էական կէտերն
ու նկարագիրները : Կէս հարթութիւններու
հակասական, ծփանդաւ ոլորումներու առին ,
կոր գիծերու բազմազան ու խուսափուկ անո-
րոշութիւններուն ընդ մէջ , կ'ընտրէ իր միա-
ցընելու ծրագիրը , ու անոր ընդհանուր ուղ-
ղութիւն մը կուտայ : Երբ մուտքի զրան
կամարի մը զարդը կ'ո չինէ , օրինա-
կի համար , կը փնտռէ քանի մը գիծեր , որոնց
ներդաշնակ համադրութիւնը պիտի ըլլայ գե-
ղեցկութիւնը իր գործին : Կենդանագիր պատ-
կերի մը մէջ , երբ նկարիչը կ'աշխատի դի-
մագծութիւնը տալ , կը ջանայ բոլոր վայր-
կենական երեւոյթները վանել անկէ , ու իր
պատկերին ու իրական գէմքին նմանութիւնը
ոչ թէ նմանողութեան (imitation) այլ հա-
մադրութեան (synthèse) մէջ կը գտնէ : Դաշ-
տանկար մը արտադրելու համար կ'որոշէ
քանի մը գիծերու համաչափութիւնը , հաւա-
սարակչութիւնը քանի մը նրբերանգութիւն-
ներու (nuance) , եւ արժէք ունեցող կէտերու
յարաբերութիւնը ի վեր կ'ը հանէ : Դուրս կը
հանէ իր նկարէն այն բոլոր մասնաւոր հան-
գամանքները particularité) որոնք գոյներու
ներդաշնակութիւնը կը հաշմեն , ձեւէ դուրս
կը հանեն գիծերը , ու արժէքաւոր կէտերը
կը ծակեն : Դուրս հանել աւելորդը , զայն ի
նպաստ կարեւորին , անհրաժեշտին փոխել
եւ գիպուածը ի նպաստ նկարագրին դորժա-
ծել , ահա ասոնք են աշխատութիւնը ար-
ուեստագէտին , ու նաեւ պայմանը գեղեց-
կութիւնը կազմելու համար :

* * *

Գեղեցկութիւնը չի յայտնուիր բայց եթէ
որոշ եւ անյեղլի պայմաններու մէջ միայն :
Քննադատ մը խօսելով Ֆիէրէնսի հեղինակու-
թեան վրայ , կ'ըսէ թէ անիկայ արուեստի

վրայ խոհանք մըն է : Աւելի անճիշդ բացատ-
րութիւն մը կարելի չ'զգիտի ըլլար գտնել այս
աշխատութեան մասին , որ կը տարբարուի
արուեստագէտի հոգին , կարեւորութիւն չի
տալով երբեք գեղարուեստի մասին վերացա-
կան սահման մը ապուլ : « Ժամանակակից գե-
ղարուեստի ուսումնասիրութիւնը » աւելի բա-
րոյագէտի քան թէ բնագիտականի (mè-
taphysicien) մը զիրքն է : Ֆիէրէնս նման
Ֆիէրէնս ալ կ'ըսէ թէ արուեստագէտը կեանքը
իր գործին մէջ կը մտցնէ . աւելի համադ-
րուած , աւելի ներուժ բան մը դուր կ'արժէ
բացատրել : Կեանքը միզի կը յայտնուի ան-
ցաւոր գէպքերու առատութեան մը մէջէն :
Մարդիկ եւ իրերը կ'ը փոխեն իրենց երեւոյթը
ժամէ ժամ , ու այս յաւիտենական փոփո-
խութիւններու փոխուստին մէջ կը պահուի
յուզէրժական ու ճշմարիտ պատկերը ամէնուն
Գեղարուեստը վեր կ'առնէ հոռու երեւոյթ-
ներու վարագայրը ու վերջնական նկարագիրը
ցոյց կուտայ իր մերկութեանը մէջ : Այս ի-
մաստով է որ կեանքն ու գեղեցկութիւնը
իրարու մէջ կը ձուլուին , որոնք մտերիմ մի-
ութիւնը , մասերէ ամբողջ մը կազմելու
անհրաժեշտ յարաբերութիւնն են : Գեղեցկու-
թիւնը՝ մեռեալ տարերքներէ զուտած պատ-
կերն է : Ու Գեղարուեստն ալ , իտէպը
զտելով ամէն բանէ , կեանքի գերազանց
ոյժ մը ցոյց կուտայ :

* * *

Երկրասարդ գեղարուեստագէտին , Պրն-
Ֆիէրէնսի հեղինակութեանն ներկայացնելը
նաեւ քանի մը ընդհանուր օրէնքներ քննա-
դատութեան վրայ : Ֆիէրէնս հիանալի կեր-
պով կը բազմաթէ արուեստագէտը եւ քննա-
տատը իրարու հետ . Երկուքն ալ միեւնոյն
չափով կը յուզուին գեղեցկութեան ի տես :
Արուեստագէտը գեղեցկութիւնը կը սիրէ ընու-

թեան մէջ, մինչդեռ քննադատը կ'ողջունէ զայն արդէն գործի մը մէջ արտայայտուած, երկուքն ալ իրենց սիրած գեղեցկութեան թարգման կը հանդիսանան։ Արուեստագէտը իր սիրած գեղեցկութենէն կենդանի գործեր կը կերտէ, մինչդեռ քննադատը զայն զգայական աշխարհէն կը փոխադրէ մատուորական աշխարհին մէջ։ Եթէ գեղեցկութիւնը մասերու՝ դէպ ի ամբողջութիւնը ունեցած ճշգրիտ յարակցութիւնն է, կատարեալ ամբողջութիւն մը եւ անյեղի ընտրութիւնը փոփոխելիին, քննադատը թառերով կը թարգմանէ այս ներգաշնակութիւնն ու միութիւնը։ Քննադատն ալ գեղարուեստական գործի մը մէջ պէտք է գտնէ հիմնական ու սեւական նկարագիրները, ինչպէս նկարիչը ընութեան երևույթներու մէջ կը գտնէ այդ ամէնը։ Քննադատը Արուեստի կողմէ արդէն զտուած ընութեան մէջէն ինքը, վերջին անգամ ըլլալով երեւան կը հանէ գեղեցկութեան ամէնէն ճիշտ տարրը։ Ու այս գործը նկարագրութիւն մըն է, որը միջոցին ամէնէն աւելի ընտրել պէտք է։ Քննադատի գործն է մանաւանդ գեղարուեստական կերտուածի մէջէն զուրս հանել խորունկ գեղեցկութիւնը, ինչպէս որ արուեստագէտը աշխատած է զայն ընութեան մէջէն կորզելու։ Այն գեղեցկութիւնը որ ընութեան մէջ տարտամ ու շղարշուած է, արուեստի արտադրութեան մը մէջ արդէն ջինջ ու պարզ է։ Արուեստագէտը պէտք է գեղեցկութիւնը նորէն յօրինէ, իսկ քննադատը պէտք է զայն մատնանիչ ընէ։

* *

Այսպէս հեղինակութիւն մը իտէալի մը ընդմէջէն դիտելը շատ տարբեր է քան թէ զայն դատելը։ Մարդ գործ մը կրնայ այն ատեն դատել, երբ այդ գործին տարերքները ծանօթ են իրեն, ու այս տարերքները խոյս կուտան քննադատէն։ Ինքը կարող չէ արուեստի գործ մը ծնիլ նորէն, որ արդիւնքն է հաղարաւոր տպաւորութիւններու ու բոլոր այն յուզումներուն, որոնք արուեստագէտի հոգւոյն մէջ բիւրեղացած են, այն հոգւոյն որ այս բոլորին սերմը կը կրէ իր մէջ։ Գեղեցկութեան արտայայտութիւնը,

արուեստագէտի հոգւոյն յուզման բոկներու ամբողջութիւնն է։ Արուեստագէտները նախ քան իրենց գործը արտադրելը պէտք է անոր կեանքովը ապրին։ Իսկ քննադատը աւելին կ'ընէ, գեղարուեստական գործի մը մէջէն զուրս ցայտեցնելով այն բոլոր ձգտումները, տենջերն, ու բոլոր երազները որոնք իրագործուած չեն։ Գեղարուեստական գործերու քննողները ամէն քան աւելի երեւան կը հանեն քան թէ կը ստեղծեն։

Այն ստուերագիծերը, որոնց մէջ արուեստագէտները կ'թոռ քայլերով կը շրջին, կը թռնին ըլլալ սահմանափակուած մութին մէջ իրենց մտքին որ պարուրուած է շոգինով ու շղարշներով։ Քննադատներու աշխատութիւնն է պատուել այդ շղարշները, լոյսի մէջ բերել արուեստական արտադրութեան անյեղի ու դերագոյն ձեւը։ Այս բոլոր պատճառներով, քննադատ մը կարող չէ դատել արուեստագէտին գործը, այլ միայն վերադատել ու չափել զայն իտէալի մը աստիճանին համեմատ։ Իր աշխատութիւններուն մէջ, արուեստագէտն ալ քննադատին կը նմանի, այնքան քննադատ է, որքան արուեստագէտ։

ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ



ՈՅՆ այն միջոցին ուր Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները ամէնէն աւելի կը զբաղեցունեն քաղաքակիրթ մարդկութիւնը՝ բնագնացութեան մէջ իրենց ունեցած մասնակցութեամբ, եւ չատեր կ'ուզեն գիտնալ ապագան ամբողջ Ամերիկայի որուն զլուխը կը գտնուին միշտ Միացեալ Նահանգները, թերեւս չահեկան ըլլայ ցուցնել մատուորական շարժումը ընկերապէս աւելի նախնական պայմաններու մէջ գտնուող հասարակութիւններուն, որոնք այսօր Հարաւային Ամերիկայի կը կազմեն։

Շատ քիչ բան ըստւած է Հարաւային Ամերիկայի ժողովուրդներու մատուորական կեանքի մասին, որ թիրեւս վաղուանը պիտի ըլլայ իր նոր ձգտումներովը, երիտաւորդ մարդկութեան մը նոր իտէալներովը:

Մանաւանդ գրականութիւնը որ ամէն ժամանակի մէջ պիտաւոր փորձաքարը եղած է, ցոյց տալով հասարակութեան մը հոգին, եւ ոյժը այն բոլոր ջանքերուն, որոնցմով հասարակութիւնները իրենց զարգացումի կեանքը կ'ապրին, նախնական պայպայմաններու ծոցէն ծնած ատեն իր մէջ կը կրէ ապագայի՝ թիրեւս մարդկայնութեամբ աւելի սոսորոտած՝ ընկերութեան մը սերմերը:

Միացեալ Նահանգները, արդէն այսօր կը ներկայացնեն քաղաքակրթութիւն մը որ տարբեր ըմբռնումներ ու զործունէութեան տարբեր եղանակ մը ունի քան թէ Եւրոպան:

Միացեալ Նահանգներու քաղաքակրթութիւնն է այսօր, որ հետզհետէ կը տարածուի ամբողջ Ամերիկայի վրայ, այն բոլոր գաղթական տարրերուն միջոցաւ որոնք թէեւ Մայր հայրենիքի, Եւրոպայի յիշողութիւնը ունին, այլ իրենց զործունէութիւնը խմորուած է համակ նոր Աշխարհի մը նոր կենսականութեամբը:

Արդէն շատ ծաւալած է այն կարծիքը թէ օր մը ամբողջ Ամերիկան, ծայրագոյն հարաւէն մինչեւ ծայրագոյն հիւսիս, պիտի ներկայացնէ նահանգներու այն միութիւնը, որ՝ արդէն քաղաքականապէս ուժեղ՝ պիտի ըլլայ ընդհանուր մարդկութեան նուազախումբին վստահ վարիչը:

Այսօր կը փութանք Մասիսի ընթերցողներուն ներկայացնել Հարաւային Ամերիկայի գրական շարժումը, որ նախնական պայմաններու ծնունդ, ունի իր մէջ յատկանշական այն տեսակ ձգտումներ որոնք նոյն իսկ ընդհանուր գրականութեան գիտական տարրալուծմանը կը նպաստեն:

* * *

Բարիդի 1889ի Արուեստահանգէսի միջոցին պատահած գէպքի մը առթիւ, ուր Քուպացի բանաստեղծ մը Օկիւսթօ տէ Արմատ՝ հեղինակ Բիւզանդական յանգեթր ոտանաւորներու հա-

ւաքածոյին՝ անձնատպանի եղերական վերջը կը գտնէր Սէնի ալիքներուն մէջ, կը սկսուէր հետաքրքրութիւն մը անձնատպան բանաւտեղծի հայրենիքին ընդհանուր գրական զործունէութեան շուրջը:

Օկիւսթօ տէ Արմատ՝ իր անձնատպանութենէն ստաջ՝ երբ այնքան հաճոյքով կը շրջէր Սէնի քարտիկներու երկայնքին, ոգիւսրութեամբ կը խօսէր իր ֆրանսացի բարեկամներուն՝ Հարաւային Ամերիկայի գրականութեան ծագմանը ու անոր զարգացմանը վրայ: Աչնան իրիկուններու իր այդ խօսակցութիւններու միջոցին կը շեշտէր ամէնէն աւելի այն կէտը թէ իր ազգակիցներու գրականութիւնը կ'արտագրէր նոր ձեւեր եւ ունէր նոր փթթումներ:

Հիմա, Հարաւային Ամերիկայի ժողովուրդներու գրականութեան ծանօթ մէկը կը տեսնէ թէ հոն ֆրանսական ազդեցութիւնը սպաննականէն շատ աւելի է մոքերու վրայ, թէեւ երբեմն Սպանիա եղած ըլլար աէլը այդ գաղթականութիւններուն, որոնցմէ կը ծնէին յետոյ Հանրապետութիւնները:

Անոնք որոնք կը մտածեն, կրնան ինքզինքնին լսելի ընել Մատուորական մկանները կրնան բոլոր խոչնդոտները հարթել. չահագրգռութիւնը՝ գաղափարներու համար այն նշանակութիւնը ունի, ինչ նշանակութիւն որ ունի ակնոյցը կարճատեւներուն: Ասով ամեն բան մեզի աւելի կը մօտենայ, աւելի մատչելի կը դառնայ:

Հարաւային Ամերիկա իր ութսուն տարուան պատմութեան միջոցին, որուն երեսուն տարիները ամուլ մաքսուումներու զոհուած են, եւ երեսուն տարիներ ալ կառավարական ու զարգացման ծրագիրներու յատկացում, այսօր, համեմատաբար աւելի անդորրութեան մը մէջ, սկսած է մատուորակութեան արգաստուորման կեանք մը:

Եւրոպայի զանազան կեդրոններուն մէջ, տասնեւհինգէն քսանի չափ Հարաւային Ամերիկայի նկարիչներ, վերջին տարիներու միջոցին մասնակցած են արուեստական մրցումներու եւ վարձատրութիւններ ալ ստացած. երեք երգահաններ իրենց օքերաները եւրոպական ըմբերու վրայ ներկայացուցած են ու նաեւ կ'երեւին շատ մը երիտաւոր բանաստեղծ:

տեղձներ , սրտնք , արկածի սէրը կուրծքերուն տակ , սխտած են իրենց թափառումները ամբողջ աշխարհի մէջ , թերեւս մեծ քաղաքներու վեղարուեստական կեանքին մէջ իր նոյն տենչերը պակուցանող նորանոր ազդեւորներ գտնելու համար : Ու այս բոլոր թափառումներէն եւ ուխտագնացութիւններէն վերջը , երբ Հարաւային Ամերիկայի արուեստագէտները իրենց ծննդավայրերը կը դառնան՝ իրենց հետ տանելով օտարութեան բոլոր յիշողութիւնները , ծնունդ կ'առնեն Մայր-Հայրենիքին մէջ , զուրօք ազգեցութիւններուն տակ կազմուող Հարաւային Ամերիկացիի եւ նորուագները :

Հարաւային Ամերիկայի ժողովուրդները , թէեւ ծագումը աւելի սպանիական արիւնէ , եւ իրենց հոգին ալ աւելի սպանիական տաճարութիւններով տողորուած , բայց իրենց մտաւորական կեանքի ձգտումները աւելի ազգեցութիւնը կրած են ֆրանսական մաքին : Սպանիականին վրայ ֆրանսական ազգեցութեան այս գերազանցութիւնը իր շատ մը պատճառները ունի , զորս կարելի չէ այստեղ մատնանիլ ընել մի առ մի : Այս պատճառներուն զլիսաւորն է այն կէտը , որով Հարաւային Ամերիկացիները ընդհանրապէս իրենց բարձրագոյն կրթութիւնը կը ստանան ֆրանսայի մէջ , ուրկէ կը ծնի սէրը ֆրանսական գրականութեան համար , զոր այսօր կը գրտնենք Հարաւային Ամերիկայի բանաստեղծներու սրտին մէջ :

Այդ հասարակութիւններու ճաշակի տեսակէտէն շատ չահեկան է գիտնալը՝ թէ անոնց անարի հեղինակներն են արձակագիրներուն մէջ Զօլա , Տօմէ , Պուրթէ եւ . . . Մօնթէբլէն ալ : Իսկ առաջապիներուն մէջ Սիւլլի Բրիւսօմ , ալ Հէրէպա եւ Արման Սիլվեստր : Պուէնօս Այրէսի մէջ հրատարակուող լրագիր մը՝ Լա Բրեքսա՝ իրեն աշխատակից ունի Մարսէլ Բրէվօի , Հանրի Հուսէի եւ Ֆրանսուա Գօփէի նման գրողներ : Միւսներն քաղաքին մէջ հրատարակուող ուրիշ թերթ մը ամիսը չորս յօդուած կը հրատարակէ Քամիլ Ֆլամարիօնէն , ու միւսներն թերթը վերատպած է եւրոպական թերթերէն՝ Զօլայի վերջին հինգ վէպերը : Ու այսպէս գրեթէ Բէրտի , Շիլլի , Վէնէրուէլլայի , Ուրուկուէյի եւ Պօլիվէի

բոլոր օրաթերթերը իրենց գրական թղթակիցները ունին Ֆրանսայի մէջ :

* * *

Հարաւային Ամերիկացի գրողները կարելի է երեք դասակարգելու բաժնել : Նախ անոնք որոնք կը հաւատան , թէ Սպանիէնը լուսացոյն կերպով գրելու համար պէտք է քայլ առ քայլ հետեւիլ Մատրիաի հեղինակներու հեաքերուն : Յետոյ անոնք , որոնք ինքզինքնին կուտան ֆրանսական հետեւողութեան , եւ վերջապէս անոնք , որոնք ոչ մէկուն քայլերուն հետեւելու յանձնառու , կ'ուզեն խումբ մը կազմել , իրենք իրենց ձեռքով հարթելու համար իրենց ճամբան , երազելով միութիւնը արդիապաշտ (moderniste) նորութիւններու բազմերանգութեան , տարօրինակ ու մեղամաղձոտ ինքնուրոյնութեանը հետ բացատրութիւններուն , որոնք թերեւս լուսութեան ծոցէն կը թոչին , ուր բանաստեղծի հոգին կը զգլտի ի տես բանբաններու անպատին հեռաւորութեան մէջ կորսուող տարածութիւններուն , եւ ուր արեւը հորիզոնի գծին վրայ կարմիր լապտերի մը պէս կը կախուի , եւ ձիւն միանուագ զովիւնն ալ կ'արթնցնէ տարաւոր արձագանգներ շրջապատիկին մէջ : Ու երբ դիչերն ալ անծանօթ ուրուականի մը պէս կը յառաջանայ , ահամայ կը ստիպուի մարդ մտքով երթալ եքքաներուն եւ ասիքներուն , Հարաւային Ամերիկայի նախապատմական այն ցեղերուն , որոնք ջնջուեցան սպանիացիներէն , յանուն քաղաքակրթութեան :

Հարաւային Ամերիկայի այդ գաշտանկարներուն մէջ բնութեան լացը կարծես աւելի սրտառու է . եւ աշխան տեսարան մը աւելի կը տուայտեցնէ մարդս քան թէ դադարի մը տեսք . դադարը կը ներկայացնէ սահմանափակուած ցաւ մը , մինչդեռ Հարաւային Ամերիկայի բնութեան պատկերներուն մէջ պարզուած աշխան տեսարան մը կը խորհրդանշէ յաւիտենական ձանձրոյթը : Ու այն լուսութիւնը որ անցեալ բոլոր լուսութիւններու ծոցէն կը բլլտի , չեմ գիտեր ինչ տարօրինակ պատճառով մը կուտայ տպաւորութիւնը ամենէն մեծ հոգեվարքին , զոր երբեք գաշտանկար մը ներշնչած ըլլայ :

Հարաւային Ամերիկայի նորածիլ գրա-

կանութեան այն մասը , որ աւելի ֆրանսական ազդեցութիւններու տակ կը կազմուի , կը բաղկանայ վեց եօթը զրազէտներէ , ամէնքն ալ երիտասարդ : Ասոնցմէ ոմանք ֆրանսացի վարպետներու աշակերտներն են : Օրինակի համար Անտոէա Մաթա, Ժոզէ Մառիա ար Հէոէտիայի հետեւորդն է , ուրիշ մը Տուպէն Տաոիօ , որ Հարաւային Ամերիկայի արդիապաշտ գրական շարժման պետը կը նկատուի , նմանող մըն է Ռիչըէնի , ու դեռ շատեր Բօլ եւ Վիքթոր Մաուրոյի , Վիքթոր Հիւկոյի : Սպանիացի ժամանակակից գրողները կը գանգաւան թէ իրենց հետեւորդները չունին Հարաւային Ամերիկայի գրականութեան մէջ :

Անհատական գոյնը կը պակսի Հարաւային Ամերիկայի գրեթէ բոլոր բանաստեղծներուն քով , ու ամէնքն ալ միակերպ ձեւի մը մէջ կ'իյնան : Անոնցմէ միայն երկու հոգի ինքնուրոյնութեան առանձին շեշտ մը ունին , թէեւ նորէն զերծ չեն ֆրանսական ազդեցութենէն : Ասոնք են Ալպէսթ Ժիւալտօ եւ Լէոբօլտ Լուկոնէս : Ժիւալտօ հետեւորդ մըն է Միւսթէի արկածի կրօնքին եւ Պօտրլէսի ու Նէովալի հիացող մը : Ինքը քերթուած մը հրատարակած է Բարիլգ անուամբ որ այսօր Հարաւային Ամերիկայի գրականութեան թերեւս ամէնէն ինքնատիպն է ու ինքն է երիտասարդներուն մէջէն ամէնէն թրթուուն գրողը , Իսկ Լէոբօլտ Լուկոնէս , աւելի վայրագ գրող մըն է Մօռիս Պուքէյի տեսակէն , խորհրդապաշտ խառնուածքով մըն ալ օժտուած :

Ու այս բոլորը որ իր նորարարող կեանքը կ'ապրի , կենթադրէ ամբողջ մատուորական

կեանք մը միջազգային քաղաքին մը մէջ ինչպէս Պուէնոս-Այրէսն է , ուր 800000 բնակչի 200000ը օտարականներ են եւ ուր բացի սպանիական թերթերէն , կան նաեւ բազմաթիւ օրաթերթեր ու հանգէտներ Անգլիերէն , Իտալերէն , Գերմաներէն եւ Ֆրանսերէն լեզուներով :

Թատերական արուեստին մէջ ալ կը տեսնենք միեւնոյն յորդ զարգացումը որով Հարաւային Ամերիկայի ժողովուրդները յառաջ կ'երթան . Պուէնոս-Այրէսի մէջ այսօր տասն եւ հինգէ աւելի թատրոններ կան , ուրկէ Սառա Պէնար եւ ուրիշ եւրոպացի նշանաւոր արուեստագէտներ իրենց արուեստի հրմայքները ներկայացուցած են տեղական ժողովուրդին :

Այսօր Հարաւային Ամերիկայի հասարակութիւնները կը ներկայանան մեղ իւրեւ ձկուն ժողովուրդներ որոնք ընդունակ են բոլոր քաղաքակրթութիւններու մէջէն լաւագոյնը իւրացընելու : Հետեւ եւրոպայէն ու Հիւսիսային Ամերիկայէն , առանց անցեալի , իրենց երիտասարդութեանը մէջ բոլոր առաջգիմութիւններուն անձնատուր , պահելով սպանիական նկարագրէն չարքաշութիւնը ու սակաւապիտուութիւնը , Հարաւային Ամերիկայի ժողովուրդներու հոգւոյն մնացեալ մասը կը կազմուի միւս բոլոր քաղաքակիրթ ազգերու հետ իր չփութի առեն : Այսօր Հարաւային Ամերիկայի մը եւ սպանիացի մը այնքան կը տարբերին իրարմէ , որքան Անգլիացի մը եւ Հիւսիսային Ամերիկացի մը : Յեղաշրջում մը տառնք իրարմէ կը զտտէ :





Խ Ո Ղ Ե Ր

ՍԿԵՊՏԻԿ



Պ. ԸՍՍ.Ի թէ ձմեռը ծերութեան խորհրդանշանն է, Չէ՞ք զգացած քամինք։
 րու այն ոյժը որ մթնոլորտին մէջ կը սուրայ, փշուռներ, փոթորիկներ, ծնող եղանակ մը, որ համակ կենսականութիւն է, Խնչպէս կարելի է ծերութեան հետ համեմատել, Եթէ գարունը իր վերկենցաղումով, զաշտերը իրենց կրփներանգ վերափթթումներովը եւ մթնոլորտն ալ իր կթոտ զեփիւռներովը ծընունդը ու ծնունդին յաջորդող տղայութեան ու պատանիի սնուչ օրերը կը յիշեցնեն, ձմեռն ալ որուն գալուստին առջեւ բոլոր պղտիկ զրդութիւնները կը թօթափին, չափահասութեան տարիքը կը խորհրդանշէ։

* * *

Մարդկային հոգիի պատմութեան մէջ կրօնքը ամէնէն առաջ է, առանց ծէսերու, առանց պաշտօնեաներու. բնութեան հիացքին հանդէպ անսկիւռեթ մտերմութիւնն է այն, բնազդական երկրպագութեան մը մէջ պարուրուած։ Ծէսերը ո՞ր ծիսականները կրօնքին անկումը կ'ենթադրեն մարդկային հոգիին մէջ, որով կրօնքի զգացումն է որ իր աննիւթականութենէն կը սուծէ, Ժամանակակից կրօնքը շատ անգ ատած է ծէսերուն, ծիսականներուն, որով անիկայ փոխանակ դէպ ի աննիւթականութիւն հսկայն պայքը ըլլալու, եղած է ծէսերու պաշտամունքը։

* * *

Դադարաբար երբ դեռ ոչ եւս էր, բա-

նաստեղծութիւնը կեանքի զաշտակութիւնն էր ու մեղեդիները կը հիւսէր. բնազդը խառնուածքն էր մարդկային հոգիին. երբ մտածումը դեռ չէր պղտորած անոր միտքը։ Մարդկային էակի բնազդական լա՛յն ու անտաղտուկ գոյութիւնը սակայն երբ անձուկներով կը պաշարուէր, ու կեանքի կոխն ալ իր ամէնէն սուր կողմովը կը մղուէր, ծնունդ կ'ստնէին գաղափար - մտածում երկուորեակ քոյրերը։ Բանաստեղծութիւնը՝ մարդկային հոգիին անդըստին հակումն է, իսկ իմաստասիրութիւնը մարդկային սեռի յարմարումը, կեանքի կռուին պահանջներուն հանդէպ։

* * *

Երբ գրքերը դեռ սկսած չէին իրենց չրջանը ընել մարդկութեան մէջ, մէկուն մտածածները շատերու հաղորդելու համար, եւ երբ խորագրութիւն մը կար իւրաքանչիւրի քով ուրիշի մը մտածածի մասին, կեանքը աւելի անհոգ եւ զուարթ էր։ Այն օրէն ի վեր երբ մարդիկ սկսած են գիտակցիլ իրարու մտածման, ախրած է կեանքը, եւ խոյս տուած է հին օրերու անհոգ թռչունը։

* * *

Բնութեան համար լայն ճաշակ մը չունինք մենք։ Զմեռները երբ բնութեան մէջ այնքան հմայիչ զաշտանկարներ կը պարզուին, ամէն մարդ տունները քաշուած, անգոյն կեանք մը կ'անցունէ։ Իսկ ամառները ուր այնքան արտայայտիչ է բնութիւնը վստփորի ավերուն վրայ, երբ այդ վայրերուն մէջ չըջապաշտութեան երթանք, մարդոց անբնական սեթեւեթները կարեւորութիւն ունեցող կէտերն են չըջապաշտելիքն մէջ։ Մօտա-Պուռնիի հրուանդանին ծայրը, երբ Մարմարան խիւօք առիւծի մը նազանքներով դէպ ի ծովեզրը կուգայ, մարդիկ՝ նստած նարս կը խաղան։

ՌՈՒՍՕՒՆ ԱՆՏԻՊ ԷՋ ՄԸ

ՄԵՃ հեղինակներու պաշտումին նուիրուած բարոյական մատուռներու մէջ , ժանժար Ռուսօինը ամենէն նշանաւորն է ապահովաբար : ՄԵՃ Ժինեյցիէն ծագած բարոյական սերունդները , եռանդով կ'աշխատին բարձր պահել իրենց վարպետին յիշատակը : Իօլ Պօնառտօ , մին , Ռուսօի ուսումնասիրութեան նուիրուած կարեւոր քննադատներէն 1900ին պիտի հրատարակէ աշխատութիւն մը Էմիլի հեղինակին վրայ , որուն մէջ գրեւորուի իր անտիպ կարեւոր եղբէրն մին է մեր ի ստորեւ ներկայացուցածը :



ՌՈՒՍՕՒՆ կարելի է ճանչնալ նոյն իսկ այն տղաքը որոնց շարժումներուն ամէնէն աւելի հետեւած ենք :

Փոքրիկ դիւզացի մը լինելու պէս կարող պիտի ըլլայ ճանչնալ իր ձգտումները :

Տղու մը՝ իր հակումներու մասին ցոյց տուած նշաններէն աւելի տարտամ ըսն չի կայ : Շատ անգամ հետեւանքն են անոնք դիտուածի մը քան թէ որոշ յարմարութեան մը , որ ամէն անգամ հանճարը , ստոյգ հանճարը , տաղանդը չէ :

Մէկը թմբուկ մը կը տեսնէ եւ զօրավար ըլլալ կ'ուզէ . ուրիշ մը չէնքի մը կ'առուցուիլը կը դիտէ եւ ինքզինքը ճարտարագետ կը կարծէ :

Կիւսթէն , իմ պարտիզպանս , նկարչութեան փափաք զգայ իմ նկարիչս տեսնելով . Լօզան զրկեցի , եւ ինքզինքը նկարիչ չ'ը կը զգար արդէն , մինչդեռ լաւ պարտիզպան մըն է միայն :

Յառաջանալու բաղձանքը եւ առիթները կ'որոշեն մարդուս կացութիւնը :

Եթէ ամէն մարդ տղայութեան հասակէն ճանչնար իր տանդանդը , շատ քիչեր կարող պիտի ըլլային ու պիտի ուզէին անոր մէջ նետուիլ , եւ նետուողներէն ալ շատ քիչերը պիտի յաջողէին առաթուր կոխել խոչընդոտները , շատ քիչ մարդիկ պիտի յաղթէին անարժան մրցակիցներու :

Ով որ իր տկարութիւնը կը զգայ , օգնութեան կը կանչէ լեզուի ճարտարութիւնը , զոր յաճախ կ'արհամարէ միւսը , վստահ ըլլալով ինքզինքին վրայ :

Ճշմարիտ տաղանդը , ճշմարիտ հանճարը պարզութիւն մը ունի , որով մարդ նուազ մտահոգ , նուազ անհանդարտ կ'ըլլայ ցոյց տալու համար իր կարողութիւնները :

Շատ անգամ տաղանդ կարծուածները անխորհուրդ բաղձանքներ են միայն փայլելու , առանց յաջողելու միջոցն ունենալու :

Չեմ հաւատար թէ այնքան բազմազան տաղանդներ կարող են զարգանալ . որովհետեւ այն ժամանակ անհրաժեշտ պիտի ըլլար որ տաղանդ մը մշակողներուն թիւը ճշդիւ համեմատէր ընկերութեան պէտքերուն : Եւ եթէ հողը մշակելու հողը՝ գերազանցօրէն երկրագործութեան տաղանդ ունեցողներուն միայն թիւը էր , եւ կամ եթէ այդ աշխատութեան հետաքննչին ամէն անոնք , որոնք աւելի լաւ կերպով կարող են կատարել ուրիշ գործեր , այն առեւն երկիրը մշակելու համար պէտք եղածին չափ մարդ պիտի չ'մնար :

Կը կարծեմ թէ մարդոց տաղանդը կը նմանի տունիկերու յատկութեան , որով անոնք մեր հիւանդութիւններուն իրենց զեղ կրնան ծառայել , թէեւ բնութեան դիտաւորութիւնը այդ եղած չ'ըլլար : Ապաւէն մըն է այն , զոր բնութիւնը վերապահած է մեզ՝ դիմելու համար , երբ պէտք ունենանք անոր :

Տունիկը կան որոնք թռնաւոր են , տաղանդներ կան որոնք կորստաբեր են :

Եթէ ամէն բան իր ունեցած յատկութեանց համեմատ զօրածուէր , բարիքէ աւելի չարիք պիտի ծնէր մարդոց համար :


Առաքինի եւ պարզ ժողովուրդները տաղանդի պէտք չ'ունին : Անոնք միմիայն իրենց պարզութեամբ շատ առողջ կրնան մնալ , քան թէ ուրիշներ իրենց բովանդակ ճարտարութեամբ : Բայց քանի կ'ապականուին մարդիկ , տաղանդներն ալ կը զարգանան , կարծես լեցունելու համար թերին առաքինութեան որ կը նուազի , եւ ստիպելու համար չարերն ալ որ օգտակար ըլլան հանքութեան , ի հեճուկո իրենց :

Պէտք է լաւագոյն եւ աւելի ապահով կա նոններով ընթանալ , եւ հրաժարիլ տաղանդի վարձքէ , քանի որ ամէնէն սպեղ բանը այն է որ մեզ հարստութեան կ'առաջնորդէ :

Գեղարուեստներու համար կանգնուած այնքան հաստատութիւններ՝ գեղեցիկ էութեան միտակ միայն կարող են :

Առարկաները անխորհուրդ կերպով իրարու վրայ դիզելով չ'իթթութիւն միայն յառաջ կուգայ անկից :

Ստոյգ արժանիքը խղզուած կը մնայ ամբողջ մէջ , եւ պատիւներն ալ ամէնէն ճարտարին չ'են տրուիր ընդհանրապէս :



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Է Զ Ե Ր

Խ Ե Ն Դ Ե Ր ՈՒ Ն Ծ Ի Ի Ր Ա Խ Տ Ը

Տոմար . Գ . ԲՕԼՕԼԵԱՆ (Բարիգ)

Մեր Հիւանդանոցի մասին , որ ասելի հիւանդ է քան թէ իր պատասպարեալները , նորէն տխուր լուսիւն մը կը տիրէ բերքերու մէջ . Այդ հաստատութեան ներքինին գիտակից մեկուն համար՝ այդ լուսիւնը շատ տխուր է . Ոչ թէ միայն մեր հասարակութեան առողջներուն համար , առողջ , գիտակից սկզբունքներով խնամք տանելու գործունէութիւն մը չունինք , այլ նաեւ մեր հիւանդներն ալ . Տենք գիտէր խնամել . Հիմնական փոփոխութիւն մը անհրաժեշտ է մեր հասարակութեան աղքատներուն , որբերուն եւ հիւանդներուն ՏԱՆԻՆ համար . Ուրախութեամբ կը հրատարակենք Տոմար . Պօղոս Բօլօլեանի յօդուածը , որուն մէջ , մեր Հիւանդանոցի յիմարներու բաժնին անմխիբար վիճակը ի վեր կը հանեարգելի Տոքթօրը , այնքան սրտառուօջ կերպով .



ԱՊ ՄԸ կար խենդութեան ու ծիւրախտին մէջ , այդ իրարմէ տարբեր երեւցող , բայց իրարու յաջորդող հիւանդութեանց մէջ . ու այս կապը տեսած են ամէն ժամանակի ու ամէն երկրի չլախտաբոյժերը : Նորութիւն մը չէր ուրեմն ինծի համար երբ կարդացի Պօլսոյ թերթերուն մէջ թէ հիւանդանոցին խենդանոցը վարակուած է Բոլսի պատիւներով : 1895 ին ամառը երբ Պօլս կը գտնուէի , այցելեցի մեր աղքատ հիւանդանոցը ու իր տխուր խենդանոցը : Ըսի այն ժամանակ թէ մեր խեղճ խելագարները շատ սեւ մթնոլորտի մը տակ կը շնչէին , թէ շատ յուր պայմաններու մէջ անոնց ընկղմած բանականութիւնը

ուղիղ ճամբու դնել կը ճգնէին զիրենք խնամելու պաշտօն ունեցողները : Կը յիշեմ տակաւին թէ բողոքներ ընդունեցայ , ըսածներս չափազանցեալ գտնուեցան : Ու սակայն Բոլսի պատիւները ըրին իրենց դործը , ու հիմայ կը կարդամ թերթերուն մէջ թէ ծիւրախտը խենդանոցը մտեր է ու կը մեռցնէ , կը մեռցնէ :

Նորութիւն մը չէ սակայն ծիւրախտը գտնալ խենդանոցի մը մէջ :

Բինէլ (1) 1819ին , տեսաւ թէ իր խելագարներէն ոմանք ծիւրախտացեալ կը մեռնէին : Ուրիշներ՝ Էսգիլիօլ , Ժօրժէ Նամանապէս ծիւրախտէ մաշած թոքեր կը գտնային խելագարներուն կուրծքին

1. PINEL , Recherches sur quelques points de l'aliénation mentale. 1819

տակ: Ուորդմէն (1) կ'ըսէր 1862 ին, թէ չատ մը խենդեր իրենց ապաքինու- մէն առաջ կը մեռնէին ծիւրախտէն:

Շատեր թէ Գրանտայի թէ Սնգ- լիոյ ու Ամերիկայի մէջ գտան ծիւր- ախտը խենդանոցներու մէջ տեղաւոր- ուած: Ու այս ախտը իրականութեան պատճառը չէին գիտեր. խելագարու- թեան մէկ վերջաւորութիւնը կը հա- մարէին այդ: Ուորդմէնի պէս, խենդ- եթէ չաղէկնայ, կը մեռնի ընդհանրապէս ծիւրախտէն, կ'ըսէին: Քոխի նշանաւոր գիւտը եղած չէր, Բասթէօն տակաւին իր մանրադէտին հրաշքները չէր ցու- ցուցած մարդկութեան, ու հրէշ-պա- սիւները, մութին մէջ, կուրծքերու տակ տկար թռքերուն մէջ կը գործէին անդադար: Ու այն ժամանակ զարմա- նալի բան մըն ալ պատահեցաւ: Տեսան որ ծիւրախտաւորներ երկար տարիներ հաղալէ, թքնելէ, թքնելէ ու հաղալէ յետոյ օր մըն ալ կը խենդենային: Նոր կապեր գտնալ կարծեցին ոմանք ու շինեցին նոր տեսութիւններ. ծիւ- րախտը, ըսին, ալքօլին պէս խենդու- թիւն ալ կը պատճառէ: Հնարեցին նոր խենդութիւններ, ծիւրախտի զաւակ: Ու այսպէս խենդերէն ոմանք ծիւրախ- տէն կը մեռնէին: Ուրիշներ՝ ծիւրախ- տաւորներէն, խենդութեան կը զոհուէին: Ու սակայն չէին խորհեր տակաւին թէ այս ամէնուն մասնաւոր պատճառներ կան. թէ խենդ մը որուն ընտանիքին մէջ ծիւրախտացեալ չի կայ, որուն թո- քերը առողջ են, ծիւրախտ ունենալու համար պէտք էր գտնուեր նոր պայ- մաններու մէջ:

Չէին խորհեր թէ ծիւրախտաւոր մը, կորսնցներու համար իր բանականութեան

ղեկը, պէտք էր ունենար մասնաւոր տրամադրութիւն մը, ուղեղի կիսկատար կազմակերպութիւն մը:

Ու մինչեւ այսօր հաւատացողներ կան տակաւին ծիւրախտական խենդու- թեան, հակառակ Բէթէրի ըսածին թէ «ծիւրախտաւորը կը խենդենայ, որովհե- տեւ տկար ուղեղ մը ունի. մարդ միշտ իր տկար կողմին վրայ կ'իյնայ»: Կան սակայն հաւատացողներ այս հին սկզբ- բունքներուն հակառակ, գիտուն ջլախ- տաբօյժ՝ Մանեանի, ու Ժօֆրուայի գրութեանց, հակառակ անոնց մէջ բե- րած ու հաստատած ճշմարտութեանց:

Ծիւրախտաւորը կը խենդանայ ու լոպհեաւ իր ուղեղը տկար է եղած ծնած օրէն, աղքատ ու մուրացկան ու գեղ մը եղած է միշտ. և կամ՝ որով- հետեւ ծիւրախտաւորը իր աղէկ օրերուն հալեցուցած ու մաշեցուցած է իր թո- քերը ու ուղեղը ալքօլով, գինով: Ալ- քօլը, իմ սոսկալի թշնամիս, որուն դէմ դրեցի ու պիտի գրեմ, հոս ալ ուրեմն իր ճիւղի դերը կը խաղայ: Ո՞ր բժիշկը գիտած չէ աշխարհի մէջ և կամ հիւան- դանոցը, ծիւրախտաւորներ, որոնք զոհե- րն իրենց միութեան: Նոյն այդ միութ- թիւնն է ուրեմն որ կը բզկտէ ընդհա- նուր առողջութիւնը, կ'այրէ թոքերը, ու կը ժանդատէ ուղեղը: Ծիւրախտը չէ ուրեմն որ խենդութիւն կուտայ, այլ կամ ծննդական, հօրենական մեղքերը (ու հոս ալ բնաւեցեք ալքօլը), և կամ անհատական ալքօլամիութիւնը:

Բայց ձգենք այս տխուր մարդերը իրենց ցաւերուն: Հիւանդանոց դառ- նանք մենք ուր Քոխի պատիւները, կ'ը- սեն, սոսկալի կռիւ մը կը մղեն խեղճ ապուշներուն դէմ: Անշուշտ ինքզինքնիս միտիթարելու համար կրնանք օրինակ բերել Բիննի, Էսգերօլի պէս նշանաւոր բժիշկներու տեսածները ու պատմած- ները: Բայց այս բաները դարուս սկիզբ-

1. WORKMAN, The journal of men- tal science and The American Journal of insanity, 1862

ները կ'անցնէին երբ ոչ Բասթէօն ծնած էր և ոչ Քոխ: Հիմա որ գիտենք թէ ծիւրախտին պատճառը, մէկ հատիկ ու էական պատճառը միքրոպներն են, հեռուները փնտռելու չէ խենդանոցէն ծիւրախտին ներս մտած դուռը:

Միքրոպները անշուշտ, իրենք իրենց գլխուն, միս մինակ մեծ բան մը չէին կրնար ընել եթէ իրենց տրամադրութեան տակ չգտնէին պատրաստուած հողը, մշակուած արտը: Հունտերն են անոնք, հողը տուէք իրենց: Այդ հողը, պարարտ, արգասաբեր, տուեր են անոնց մեր խենդանոցին մէջ. ինչո՞ւ զարմանանք ուրեմն որ ծիւրախտը կը գործէ մեր խեղճ խելագարներուն կուրծքին տակ: Խենդերը ընդհանրապէս գէշ կը սնանին, ոմանք նոյն իսկ ամէն տեսակ սնունդ կը մերժեն. շատեր ստամոքսի, աղիքներու խանգարումներ ունին. սննդառութիւնը, ներքին գործարաններու փոխառութիւնք շատ յոռի կերպով կը կատարուին. ու այս պայմաններու մէջ քայքայման գիմադրելու կարողութիւնը չափազանց կը տկարանայ:

Այն ատեն է որ միքրոպները կը հասնին ու կը տեղաւորուին:

Եւ եթէ հիմա, մեր հիւանդանոցին ջրախտարանին պաշտպանեալները կը գտնուին չորս տարի առաջ տեսած վիճակիս մէջ, կը զարմանամ թէ դեռ կ'ապրին:

Հոս անշուշտ իմ դերս կ'աւարտի. բայց բժշկի շրջանակէս դուրս կ'ելլամ հարիւր անգամ կրկնուած քարոզ մը կարգալու համար նորէն:

Տեղ մը, որքան ալ պզտիկ ըլլայ ֆլաս չունի. բայց արեւով տաքցած, օդով լեցուած հողի անկիւն մը գտնալու է վերջապէս, հոն փոխադրելու համար խեղճ տխմարները: Խենդերու վիճակը, խնամքով, հոգածութեամբ ու գլխաւորաբար լաւ առողջապահութեամբ մը կարելի է ամօքել: Խենդը արգահատանքէ զատ, կարեկցութենէ աւելի կանոնաւոր խնամքներու պէտք ունի: Ու չմոռնանք թէ խենդութիւնը հիւանդութիւն մըն է, խենդը հիւանդ մը: Ու խնամենք զիրենք. ու ամէնէն լաւ գործը ըրած պիտի ըլլանք:



ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԼՅԻՈՆ ՍՅՂԲՈՍԵԱՆ

(ՄԻԻՆԻՔ)

Դ.



ԱՅ էՐ պատուհանը .

Հազիւ փողոցէն մէկուկէս մարդաշափ բարձր՝ կը նայէր քարափին եւ ծովուն վրայ , որուն կապոյտ այտերը քնկոտ ու յոգնած դեղնութիւն մը առեր էին իրիկունս դալուկ երկինքէն :

Նուրբ չղարչէ լայն վարագոյրին ետեւը քիչ մը քաշուած՝ պատուհանին մօտ նստած էր երիտասարդ աղջիկ մը , իրանը բարձր ու լեցուն . չափազանց առատ ու թունդ-սեւ մազերը անկարգ ու անադին չեղջով մը դաւաթին դիզած . դէմքը կլոր , քիչ մը գէր ու տփօյն , որ պատուհանէն ներս յորդող չըջապատի դեղինին մէջէն բոլորովին ճերմակ կը թռէր , նուրբ ու թափանցիկ ճերմակութիւն մը . ու այդ ֆօնին վրայ երկու խոշոր արեւելքի սեւ աչքեր :

Դուրսը կուրծքին ձգած՝ վարժ մատնե-րով ձեռքի ժանեակը կը հիւսէր , երբ Մարմարայէն Վոսփոր մտնող հակայ շողենաւի մը խապոտ սոյլը յանկարծ ժայթքեց ու ծանր տարածուեցաւ ամբողջ ծովուն վրայ :

Աղջիկը ակնարկը բարձրացուց ու նետեց խոշոր ճերմակ շողենաւին , որ հանգիստ ու մեծափառ կը յառաջանար : Արմուկը դրաւ թիկնաթոռի թեւին , առաւ դուրսը ափին մէջ , մինչ միւս ձեռքը ժանեակին հետ դէպի դուռ սահեցաւ . ու մնաց անշարժ , ծոյլ ու յառած վերացման մը մէջ , սուղուած իր մտածումներուն խորը , որոնք քսա երեւոյթին դիմացի շողենաւէն ալ դանդաղ կը շարժուէին իր գանգի տակ :

Բարակ հովանոցի մը սուր ծայրը կամաց մը վեր բարձրացաւ պատուհանին տակէն ,

ու քանի մը անգամ ամուր իրարու ետեւէ զարկաւ եղերքի տախտակին :

Աղջիկը կէս մը վախցած խոփոռ դէմքով նայեցաւ վար , բայց իսկոյն ժպիտը ցատկեց դէմքը .

— Ա՛, Մինէ՛ :

— Ու մէկ ոստումով սենեակէն դուրս նետուեցաւ ուրախ՝ փողոցին դուռը բանալու :

Հազիւ դուռը զոցուած պինդ փաթթուեցան իրարու վիզ՝ հնչիւն-հնչիւն համբուրուելով :

Իրենց մանկութեանը անոնց տուները կից էր իրարու , ու դրեթէ միշտ միասին էին եղած : Մինէի ամէն վերադարձին նորոգեր էին իրենց մահրմութիւնը , եւ իրենց երթեւեկը մինչեւ հիմա ալ կը շարունակուէր : Միայն հեղհեղէն շատ տարօրինակ զոյն մը աներ էր այդ բարեկամութիւնը . նախ կարծես խոյս կուտային իրարու յաճախ հանդիպելէ , թէեւ երկուքն ալ միշտ կատարեալ համակրանքով ու սրտանց իրար կը զմաւորէին . եւ այն հին բաց ու ջերմ շեշտը մէջերնուն երբէք չէր վերցած : Սիրտերը նոյն էին մնացեր . կեանքի տուած հետաքրքրութիւնն ու իրենց մտածման առարկաներն էր փոխուէր միայն : Այդ կ'ըզգային երկուքն ալ , սակայն փոխադարձաբար ոչինչ չէին ըսեր իրարու :

— Մինմկ ես . հարցուց Մինէ :

— Այո՛ , մայրս Յովակիմեաններուն գնաց-իսկ հայրո , գիտեմ , վերջին շողենաւով կու գայ միշտ : Դուն ո՛ւր ես այս քանի ատեն է , ի՞նչպէս ես :

— Է՛. ըրաւ Մինէ դժգոհ ուսը ցնցելով :

— Հը՛ , քէֆդ տեղը չէ՛ :

— Այս վերջին օրերը տրամադրութիւնս անբուժ է քիչ մը :

— Երեւի դերասանական զլխու ցաւանք նորէն :

Մինէ ակնթարթ մը չի ազատասխանեց , ու վերջը մտածկոտ զլուխը շարժելով կցեց երկդիմի :

— Դերասանական զլխուցաւանք . այո՛ :

Բայց իսկոյն բան մը մոռնալ ուղղի ձեռքի բնցաստական շարժում մը ըրաւ , ու աւելցո՛ւց .

Է՛, Արուսեակ , թողնենք այդ : Ա՛ն ըսէ՛ դուն ինձի՛ ի՞նչդ ինչ բանի ես :

— Ի՞նչ բանի պիտի լինիմ . չե՞ս տեսներ . քիչ մը կարէ՛ , քիչ մը կարգե՛ , կամ թեւդ դէր պատուհանին ու գուրո նայէ՛ :

Եւ աթոռը ուժով մը քաշեց պատուհանին կից :

— Մանաւանդ այս պատուհանը . ա՛ , եթէ այդ չլինէր : Այս պատուհանը իմ ամէն բանս է . իմ ամենասիրական դիրքս , իմ թատրոնս , իմ բանօրամասս , նոյն իսկ իմ ժամացոյցս . չե՞ս հաւտար . ես գիտեմ , օրինակ , ժամը քանիին մեր քովի դրացիին տղան դպրոցէն կը դառնայ , որոշ մանրավաճառներ ժամը քանիին կու գան . եւ վերջապէս չոգենաւորներուն կանոնաւոր երթն ու եկը : Հապա՛ . կը նստիս , կը դիտես անցորդները , անոնց դէմքերը , շարժումները , խօսակցութեան կտոր մը կուգայ ականջիդ , մնացածը ինքդ երեւակայութեամբ ամբողջացնել կ'աշխատիս , կը դիտես փոքրիկներու կռիւ , որոնք քաւափին վրայ իրարու կը հայհոյեն . նաւակները , նաւավարները . տեսնելու ես երբեմն ի՞նչ առողջ , կորովի մարդիկ կան մէջերնին . երիտասարդ նաւավար մը կայ , երբեմն կ'անցնի իր նաւակովը , տեսնէս ի՞նչ գեղեցիկ , հուժկու տղայ է :

— Հը՛մ , չե՞նք միմեկուսիս սիրահարիս . կատակեց ընկերուհին :

Ա՛խ , ո՞վ է տուեր ինձի այդչափ քաջութիւն : Միայն երբեմն , իրաւ , բոլոր սրտովս կը ցանկայի , որ ես ալ իր քովը , իրեն՝ պէս , իր նաւակին մէջը լինէի . ձկնորս մըն ալ ես : Ա՛հ , ի՞նչ սիրուն է լինելու մինչեւ վերջը ծովուն վրայ , մինչեւ վերջը արեւը արեւմուտէն , հոգերու ու իրարանցման դէմ . այդ գեղեցիկ , ուժեղ տղան շարունակ քովդ փոթորկի՛ ու աշխատութեան մէջ . ամբողջ կեանքդ կռիւ մը պատառ մը հացի համար . . .

— Է՛ , արեւդ սիրեմ , տոտնք ստնթիւմէն . թալ անուրջներ ես : Կը կարծե՞ս լըջօրէն , որ չափազանց գրաւիչ բան է պատառ մը հացի համար ամբողջ կեանքդ ճանկընթուիլը :

— Չգիտեմ . այսքանը պարզ է ինձի միայն , որ շատ անհամ ու անբովանդակ բան է իմ այս անյող ու անհոգ կեանքս : Հայրիկը շուկայէն պէտք եղածը կ'ուղարկէ , մայրիկը կը պատրաստէ , դո՛ւն տը նստէ՛ ու կե՛ր . ապրի՞լ է այս :

— Աղէկ որ ի՞նքդ կ'ըսես . բացադանչեց

Մինէ ողեւորուած : Տո՛ւր ինքզինքդ զբաղմունքի մը , սկսէ՛ բանով մը լո՛ւրջ աշխատիլ :

— Ա՛ , դո՛ւն ալ որ այդպէս կը խօսիս . կցեց Արուսեակ ձեռքի արհամարօտ շարժումով մը : Լուրջ բանով մը զբաղի՛լ . ի՞նչ բանով . տունը իմ աշխատանքիս պէտք ունեցող չի կայ . մայրս հերիք է կատարելապէս . արդէն չի՛ ալ թողուր ձեռքս ջուրի դպցընեմ . եւ եթէ չիտակը կ'ուզես ի՛նքս ալ բնաւ ո՛չ տրամադրութիւն ունիմ , ո՛չ ալ չնորհք անային գործերու : Իսկ տունէն դուրս ի՞նչ կը բարեհաճիս որ բնեմ . անցած օր պարոն Վահանը հոս էր . կը ճանչնամ , դասատու՛ն . ելեր է գլուս հասարակական գործունէութիւն կը քարոզէ . նախ այդ գործերէն խելքս բան մը չի կտրեր . երկրորդ այսչափը դոնէ կը հասկնամ , որ պէտք է կարողութիւն , պատրաստութիւն ունենալ . իսկ իմ կրթութի՞ւնս . տէ՛ , ամենքին յայտնի բան է , մեր բոլորիս ջանքը հնար եղածին չափ փառաւոր տիպլում մը առնելն էր ու լեզուներ սորվիլը , սորված լեզուս մկներն ու տեսն . իսկ տիպլումը առի , քիչ մը պարծենցայ ու զրի գլորցը . ալ ատկէ աւելին ի՞նչ կը պահանջես իմ դպրոցը ուսածէս :

Մինէ յառած ընկերոջը կը նայէր անժրպառն :

— Ինչո՞ւ զարմացած երեսս կը նայիս . կը կարծէիր այդ բոլորին իմ խելքս չի՞ հասնիր , հա՛ . Գործիս անունը ի՞նչ է մինչեւ իրիկուն . մարդ ակամայ մտածելու կը սկսի : Ա՛խ , Մինէ՛ , եթէ գիտնաս ի՞նչպէս քեզի կը նախանձիմ . գացի՛ր դուրսերը , ուրի՛շ երկիրներ , ուրի՛շ մարդիկ . ունիս հիմա քու գործդ . ազա՛տ քեզի համար , ինքդ քու զխուզ . կ'երթա՛ս ուր որ ուզես , կ'ընես ինչ որ կը ցանկաս . առանց կարեւորութիւն տալու , թէ վրայ կը խօսին , թէ կը բամբասեն , թէ ի՞նչ :

— Աղէ՛կ . քու թեւդ բռնողը ո՞վ է . դուն ալ կարեւորութիւն մի՛ տար :

— Ե՛ս . ժպտեցաւ Արուսեակ տարտամ : Ինչի՞ր կը խօսիս . ինձի պէս պարկեշտ ու ամօխխած աղջիկ մը . եթէ չեմ հաւտար բոլոր դրացիներուս ու ազգականներուս հարցուր . համե՛ստ ու պարկե՛շտ . հապա՛ :

— Ես քեզի չեմ հասկնար , հոգի'ս : Արդէն քանի անգամ ըսեր եմ , որ պարզապէս ըմբռնել չեմ կրնար քու այդ փակուած կեանքը . դո'ց ու առանձին : Երկու քայլ չես կրնար դնէն դուրս դներ առանց մայրիկի , ծանոթ երիտասարդի մը հետ տեղ մը երթալու չես համարձակիր , նոյն իսկ չես յանդգնիր փողոցը դէմդ ելնողին երեսը չիտակ մը նայելու . այդ ինչի՛ է նման . միշտ մայրիկի փնչերուն ու հօրաքոյրերու՝ գովաւանքին տակ : Է՛ , հոգի'ս , երիտասարդութեան ու կեանքի սպաննումն է այդ , ուրիշ ոչինչ : Ինչո՞ւ այդպէս կապած-կաշկանդուած կը մնաս , երբ ինքդ ծաղրանքով կը խօսիս քու « համեստութեանդ » մասին . ելի՛ր , ելի՛ր գուրս . տո՛ւր ոտքիդ տակը այդ բոլոր յիմար կապերը , պառաւներուդ « բարոյական » հայեացքը , տարեկիցներո՛ւդ քսու նախանձը ու դրացիներուդ ապուշ բամբասանքը :

Արուսեակ հեգնական Ժպիտ մը չրթունքին պահ մը լռեց . ու յանկարծ չոր ու կրտուկ շեշտով մը ըսաւ .

— Ինձի՛ նայէ . դուն ալ եթէ աչքդ բացած օրէն մօրդ թեւին տակէն դուրս չի գաիր , դուն ալ եթէ քեզի չըջապատողներու ըսածներէն ու սովորութիւններէն զատ բան մը չտեսնէիր , դո՛ւն ալ ինձի պէս այս « փակուած կեանքը » պիտի վարէիր , ինչպէս որ կ'ըսես . այդպէս խոշոր-խոշոր մի՛ փրթեր , Դժգո՛հ լինել , տրանջա՛լ , ի հարկէ , ուրիշ խնդիր է . բայց իրապէս մեզի չըջապատող կեանքէն դուրս գալ՝ մեզմէ ոչ ոք չ' կրնար մտածեր . ի՞նչպէս դուրս գալ . եւ ինչո՞ւ , ի՞նչ բնելու համար . այդ բոլորի մասին ես չատ եմ մտածած : Գու զիրադարձէդ առաջ ալ , այս վերջի ամիսներն ալ այդ ամէնը զխէս կ'անցնին յաճախ , երբ այսպէս արմուկս պատուհանին հեռո՛ւն ծովուն վրայ կը նայիմ . բայց այնպէս միայն մտածելու , Ժամանակ անցնելու համար , ուրիշ ոչինչ . ես ու դուն տախարճքը չենք փոխեր , այս ոյսպէս եկիր է , այսպէս ալ պիտի երթայ :

Մինէ ոչինչ չառարկեց . քիչ մը ստուն երկուքն ալ լուռ նստած էին իրարու զիմաց հեռոջհեռէ գորշացող երկնքին ու ծովուն դէմ :

Մինէ որ սկիզբը կարեկցութեամբ ընկուրուհիին կը հետեւէր , քիչ-քիչ սկսաւ տար-

օրինակ զայրոյթ մի՛ զգալ իր մէջ , ինքն ալ որոշ չգիտեր՝ ինչու . բայց այդ զգացումն ալ երկար չի տեւեց , ու տեղի տուաւ ներքին խլրտող հպարտութեան եւ դոհունակութեան շոյող յուզումի մը , որ իր մտածումներուն վրայ եկաւ փռուեցաւ : Դոհունակութիւն մը իր ինքն իր գլխուն , իր ազատ լինելէն . հըպարտութիւն մը իր առաւելութեան , իր արհեստին :

Եւ այդ զոյգ զգացումներու թեւին տակ իր խօսուն տրամադրութիւնը դարձաւ նորէն իրեն : Նախ իրենց մասին մանկութեան յիշատակներէն կը շողակրատէր . վերջը պատմեց իր հօրը հետ Օտեսսա անցնելուն հանգամանքները . հոնկէ ալ Թիֆլիս . իր կիմնադ մանկը , ու փանսիօնի աշխոյժ , արադահոս ընկերական կեանքը : Այդ ամէնը սկսան թեթեւ իրարու յաջորդել անոր լեզուին ծայրը , ու ազջկան խօսուածքը աւելի թափ ու աւելի ջերմութիւն առաւ :

Կը պատմէր ան երկա՛ր , պատմելու անհրաժեշտ պահանջով մը , թէեւ ըսածները ունկընդդին համար բնաւ նորութիւն չէին . եւ մանաւանդ իր ամենէն աւելի սիրած խնդրի մասին . իր հեազհետէ բեռով յալիչ-տակուիլը . այն առաջին զպրօցական մէկերկու ջնչին փորձերը , չըջապատողներուն գովասանքը , ետքը քանի մը անգամ սիրողներուն խումբին մէջ , ու արդէն հոսանքը տարեր էր : Ա՛ , այն լացերը , խնդրեցները , միջնորդութիւնները , ու այն անթիւ մանր պայմանները , մինչեւ որ հայրը գրեթէ բոնի վերջապէս տուեր էր իր համաձայնութիւնը :

Ու Մինէ մէկ ստատումով ցատկեց Մոսկուայի կեանքին . իր առաջի տպաւորութիւններուն , ոգեւորութեանը , զասերուն . այլ եւ նոր միջավայրի անսովորութիւնները , զաւելատանքը . լուրջ ու կատակ իրարու խոռոնած մէկ շունչով : Յոռկարծ յիշեց հօրը մահը . իր աշխատութիւններուն ընդհատիլը ամենատաք տեղը . ստիպուել էր ձմեռուան կէսին թողնելու ամէն բան ու ետ դառնալու : Այն ի՞նչ բեկում , չէ՞ որ հարկադրուած էր ալ ձգելու իր պաշտած գործին շարունակութիւնը . ուրիշ էր այլ եւս իր դրամական միջոցը : Է՛ , այդ տանջանքը փայտայած ծրագրերէնէդ ձեռք վերցնելու երկաթէ անհրա-

մեշտութեան դէմ. բայց եւ այն անգուսպ բերկրանքը, երբ ամիսներու վարանոտ յոյսերէ ու ջանքերէ վերջը յաջողեր էր. կրկին ծանօթ տիկնոջ մը օժանդակութեամբ ինքզինքը նորէն Ռուսաստան նետելու :

Շատ չանցած Թիֆլիս էր վերադառնալ, արդէն աւարտած, արտադրիկ քուրսերը, արդէն բնութի վրայ : Միթէ կարելի է մոռնալ այն առաջին քայլերը. կթոտ, յուսալից, երկիւղած, բայց եւ ինքնազորակից ու վստահ իր ընդունակութիւններուն : Այն տարափը համակրանքի ու յարձակումներու. այն եռոճ, աղմկոտ, քանդոր մէկուկէս տարին, բայց եւ այնչափ հիատութախումներով ու դառն փորձերով լեցուն, որուն վերջին օղակը դեբասաններու հիմնական պառակտումն էր եղած, ու խմբի ցրուիլը :

Նկարագը եկաւ ապագայի ծրագիրներուն :

Շուտով վերադառնալու է արդէն Թիֆլիս. լսած է, որ հոն նոր ջանքեր կը լինին թատրոնական գործը կրկին ոտքի հանելու. երեւի, բան մը կը յաջողի : Իսկ եթէ ոչ, է՛, հայկական բեմէն խոր չի կայ. կը ջանայ, ուսական շնորհքով խումբի մը մէջ մտնելու. կը դիմէ Մօսկուա իր սիրելի ուսուցչապետի օգնութեան, որ այնքան խոստումներ տուած է իրեն, եւ որ այնչափ կ'ապեր ունի ու հեղինակութիւն. հաւանօրէն բան մը գլուխ կու գայ : Եւ ո՞վ դիմէ, զուցէ շատ չանցած յաջողի մեծ բնութի մը վրայ ոտք հաստանալու. դժուարը դժուար է, ի հարկէ. բոլորը խնամական հաշիւներու կ'ապուած. եւ պէտք է անպատճառ աղքատիկ թեւարկու մը ունենալ կամ բարձրատիճանի սիրելան մը. մրցումն ալ մեծ, ամէն կողմ էնդրիկներ. . . բայց ո՞վ դիմէ, եթէ իրաւ իր մէջը ուժ կայ, եթէ իրօք բանի մը պէտք է : Ո՞վ ուժ ունի ու կամք՝ բաղքը անոր հետ է :

Միշտ էր բոլորովին, երբ Արուսեակի մայրը եկաւ ու փրցուց այդ օղեւորութեան չղթան : Մինէ եկաւ, հրաժեշտ տուաւ հախանձէն ու հիացումէն կաշկանդուած ընկերուհիէն. եւ իր հրաշքած յոյսերու ոսկի կայծերէն ինքը բռնկած՝ վառուող այտերով հաւառ տուաւ :

— Ինչո՞ւ նորէն այդչափ ուշացար. ըսաւ մօրաքոյրը զուր բանալուն պէս : Տէ՛ր, Հրանտը հոս էր նորէն. ժամուան մը չափ

կայ. քիչ մը սպասեց, տեսաւ որ մէջտեղ չի կաս, ելաւ գնաց :

Աղջիկը ամբողջ մարմնով ցնցուեցաւ, ու ակնթարթ մը սեմին վրայ կանգ առաւ աւամայ :

« Հրա՞նտը . . . »

Ու իսկոյն արթնցաւ նորէն կրծքին տակ վերի օղեւորութեան թափին մէջ առժամապէս թմրած այն զգացումը, որ վերջին օրերը շարունակ սարդի ոտտայնի մը թելերուն պէս բարա՛կ ու կպչո՛ւն զաւարուած էր իր բոլոր մտածումներուն շուրջը. տեսակ մը ակորժ յուզում, ու անորոշ երկիւղի պէս բան մը. խտիր տուող ու խրանեցնող. զգացում մը, որուն Մինէ ո՛չ մէկ անուն չէր կրնար տար, եւ չէր ալ ուզեր տար :

— Է՛, ինձի համար բան մը չըսա՞ւ. հարցուց աղջիկը. հանդարտութիւնը գտած, ու կամաց մը զուր գոցելով :

— Ի՞նչ պիտի ըսէ. Հա՛, վերջը սեղանին վրայ քեզի քարթ մը ձգեց կարծնմ. գնա՛ նայէ :

Աղջիկը շտապ վառեց ճրագ մը, ու վազեց սանդուղներէն վեր :

Հիւրասենեակի ճիշդ մէջտեղը դրուած կրօն սեղանին վրայ ինկած էր տղու այցեւտումը :

« Քեզի տունը հանդիպելը հազուագիւտ բաղդաւորութիւններէն մէկն է արդէն, որ ամէն մահկանացուն չէ վիճակուած. Եկայ որ խելքովս քիչ մը պատշտի երեսնք միասին. ինչ եւ է : Վաղը ճաշէն վերջը տունը քեզի կ'ըսպասեմ. հաւակնիս ալ պատրաստ կը լինի. մինչեւ անգամ բացառապէս կը համաձայնիմ այս անգամ ղեկավարութեանդ ենթարկուելու. կ'ընջ մը ղեկավարութեանը ենթարկուիլ . . . կրնա՞ս երեւակայեր, ի՞նչ սոսկալի յանգգնութիւն ու անձնագոհութիւն է այդ իմ կողմէս. ուրեմն զո՞ն ու սրտութեան գնահատել զիտցի՛ր, ու անպատճառ եկո՛ւր : »

Ժպիտը չըթուքին աւարտեց ընթերցումը, նստաւ մօտի աթոռին, առաւ քարթը շեղակի երկու սուր ծայրերէն մատնեմատին ու փութին մէջ, բռնեց դէմքին ու սկսաւ փչել ու դարձնել. արա՛ղ, շունչի ներածին չափ արա՛ղ . . .

(Շարունակելի)

ԼԵՐԱՆ ԶՈՎՈՒՈՒԼՆԵՆ

ՎԱՐԴ-ՄԵԼԻՔ (ԱՐԱՅԿԻՐ)

(Զիռ վրայ գրուած)



ԻՂԻՈՅՆ վրայ էին , տեսայ ես զանի ,
Արեւին դէմ պարզած էր կուրծքն հոլանի .
Զոյգ մը ծիծեր բռնամած՝ երկար պարկի պէս
Ծալ ծալ կախուած էին մինչեւ յիւր գօտի :

Այրած էր դէմքն . . . ու բախանցիկ իր կուրծքին
Մարբր կաշի էր դարձած , ո՛վ դժբաղդ կին .
Զրգուանք կը զգար մարդ այն երկու ակերէն .
Որոնք կոչուած էին քլալ կնոջն հոգին :

Օր մ'այդ լանջքը սարդի գունով կը փայլէր .
Վրբան բացուած գոյգ մը կոկոն ծաղիկներ ,
Իբրեւ ցրցունք՝ գոյգ մը բլուր երանգնու
Ոյց կողերուն վրայ մանուկ մ'էր կախուէր :

Զարկաւ տապը , ցանեց փոշի իր վրբան ,
Խորշումներով ա՛լ ծածկուէր էր կուրծքն համայն ,
Փափուկ կիներ տեղի առերեւ էր կարծես ,
Զագիր ու գարշ , փողոցներու աղտոտ շան :

Դեռ իր դէմքին վրայ , սակայն , հետքեր կան ,
Աղուոր ախլի գեղեցկութեանը՝ կրկնլան .
Հարտար ու նուրբ բնութեան գծերն՝ դեռ անջինջ՝
Կը խօսին սրտիդ , իբրեւ կնոջը վրկան ,

Զունի ցերեկ , գիշեր , այդ կիներ լեռնի ,
Զաւակ խիզախ , սարի , ձորի ու դաշտի,
Ժուժկալ՝ զգաստ է ան մեռած կրբներով . . .
Զերդ կաշա խեցի մ'եկած ձեռքէն բրուտի :

Իր կովերուն վրայ բեռցած կայքն ու աղիս ,
Կը բալէր լերան կիճն համարձակ ու անվախ ,
Ամբան կ'երբար դէպի լեռներն հովասուն ,
Այծեմորքէ վերարկուն ուսերէն ի կախ :

Սեւ ու դաժան աչքերով ա՛յլ հովուուհին ,
Բոց ունի հուր , որոնք վաշխալ կը վառին ,
Եւ կը ժրպտէր դէմ արեւի շողերուն՝
Ակռաներուն մարգրիտ շարքը իր բերնին :

Դի՛ր զանկա տկուճբներու մէջ երկսեռ ,
Հոն՝ ուր կեանքը ծաղիկ բուրէ , զըրգտոնք , սէր ,
Զպիտի կրնաս բսել «նորա՞» քէ «ներա»
Քարացումն այս սեռի , ես չէի տեսեր :



ԿԱՐՑ (Մայկարա)


Դաշնակին առջեւ բազմած հեշտօրէն ,
Աղուոր աղջիկը կը հատնի տակաւ ,
Ու փրկասկրբեայ ցտեղնաշարէն՝
Կը բրնձին սիրոյ վանկեր՝ բշտապաւ :

Հոգին՝ երգին հետ գուցէ կ'առնէ բեւ
Սէգ սիրականի հասցէին կորած ,
Մինչեւ հոն՝ ուր շունչն հովերուն քերեւ ,
Կը բրգբաւ գայն , կը ցրբուէ անդարձ :

Տըժգոյն աղջիկը պիտի նըւաղի
Երգերուն անգութ մեղմութեան խոր ,
Թողէ՛ք որ հոգին պահ մը խաղաղի
Խրո՛ւով հոգիներու ծրփանքէն պրդաոր :

Ու երգերուն հետ նայուածքն ալ մըրիմ
Կը ցրբուի դէպ ի արեւը կարմիր ,
Մինչեւ ո՞ւր , — գուցէ լեռներէն անդի՛ն , —
Պարապին մէջ՝ ուր յայն ալ չի՛ բառիր :





ՊԷՏՔ Է ՈՐ ԳՐԱԳԷՏՆԵՐԸ ԱՄՈՒՍՆԱՆԱՆ

Է. Ճ. ՀԱՐՏԻ

Անգլիացի մը վերջերս նրատարակած է գիրք մը , նշանաւոր անճամարութիւններու սիրային եւ ամուսնական կեանքին վրայ :

Սոյն հեղինակութեան կը փութանք մեր ընթերցողներուն , մանաւանդ մեր ընթերցողուհիներուն ներկայացնել գլուխ մը , որուն մէջ հեղինակը շատ նորը միջոցներով կը զգացնէ այն ամենամեծ անհրաժեշտութիւնը որով կին մը ամենէն առաջ պետք է իր ամուսինը հասկցած ըլլայ , սրտիս գի կարող ըլլայ ատով երջանիկ ընտանեկան յարկ մը կազմել : Ընտանեկան երջանկութեան համար այս մեծ անհրաժեշտութիւնը , կարծեմ , մեր կիներու մեծագոյն մասին համար , նորեւեկի աւելորդ պահանջ մըն է , որուն չի գործադրուելովն ալ կարելի է երջանիկ ընտանեկան կեանք մը ունենալ : Ցաւալին այն է , որ մեր կիները ընդհանրապէս , պետք եղածին չափ սրտի եւ մտքի զարգացում չունին , ամուսնական կեանքացեան մասին աւելի լայն ու աւելի մարդկային ըմբռնում մը ունենալու համար :

ՆԱՐԿԻՍ



Ե ՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ունեցող անձերէ ոմանք Եւրոպայի մէջ ոչ թէ միայն կը հաւատակին գրական մարդոց կանոններէն , կամ մէկէ աւելի անգամ ամուսնանալուն , այլ նաեւ հաւատացած են թէ ամուսնական կեանքը կը ջլատէ գրագէտի մը կարողութիւնները քան թէ կը սրէ զանոնք :

Հին առած մը կ'ըսէ թէ Մինէրվա եւ Վէնիս կարելի չէ որ միասին ապրին , Տառն եւ Վեցերորդ դարու իմաստասէր միտք մը , Մոնթէնը իր ամուսնութիւնը ակնարկելով

կ'ըսէր . «Եթէ իմ անհատական կամքով շարժէի , նոյն իսկ իմաստութեան հետ չալտի ուղէի ամուսնանալ , եթէ անկեղծ վրաս սիրահարած իսկ ըլլար : Բայց ասկեղծ նորէն պատճառ մը չէ ամուսնանալէ - հրաժարելու համար , քանի որ կեանքի սովորութիւնները կը հարկադրեն զայն : Մենէ շատերը իրենցմէ առաջ գանձողներու օրինակին կը հետեւին , ոչ թէ անհատական ընտրութեան » :

Անգլիական թերթի մը մէջ շահեկան յօդուած մը հրատարակուած է որ կը յայտնէ հիմնարկութիւնը «մեծ մտքերու պաշտպանութեան ընկերութեան» մը , սոյն ընկերութեան նոյն իսկ առաջին գումարման միջոցին տրուած որոշումներէն յոտակօրէն իր ձգտումները կ'երկ-

ւան Այդ որոշումներէն մէկ քանին հետեւեալ-
ներն են . « Նկատելով որ որոշ տեղերու մէջ
յարատեւ ջանք մը կ'ըլլայ ամուսնութեան տա-
րիքին հասած աղջիկները գրական մարդոց
հետ նշանուելէ ետ կեցնելու , »

« Նկատելով որ այս դատապարտութիւնը
հետզհետէ ծնունդ պիտի տայ սխալ
եւ ծիծաղելի այն տեսակ համոզման մը
թէ՛ գրողները անհաճոյ ամուսիններ կ'ըլ-
լան , »

« Եւ նկատելով որ եթէ այս տեսակ հա-
մոզում մը , առանց արդելի ամէն տեղ
տարածուի , կարող է թէ անհատներու եւ
թէ ընկերութիւններու մեծ վնասներ պատ-
ճառել , »

« Ուրեմն, Առաջին , կ'որոշենք որ երեք
հոգիէ յանձնաժողով մը կանոնադիր մը կազմէ
մեր ընկերութեան համար , եւ երկրորդ կ'ո-
րոշենք որ այս ընկերութեան պիտաւոր նպա-
տակը ըլլայ չնչել ներկայիս մէջ հար-
սընցու աղջիկներու ունեցած այն համո-
զումը թէ մեծ միտքերը միշտ գիւրադրգիտ
կ'ըլլան : »

* * *

Ընտանեկան երջանկութեան համար ա-
ւելի աննպատակ բան մը չի կայ քան թէ ա-
մուսիններու պէտք եղածէն աւելի երկար ա-
տեն տունը կենալը , որու հետեւանքները ան-
հաճոյ միայն կրնան ըլլալ : Ընտանեկան յարկի
մը տակ խաղաղութեան գլխաւոր պայ-
մանն է որ տանտէրը օրուան մէջ գոնէ
վից ժամու չափ տունէն բացակայ ըլլայ :
Շատ անգամ , գրողները՝ կրօնաւորնե-
րու , արուեստագէտներու եւ ուրիշ մար-
դոց պէս որոնք տանը մէջ կը կատարեն
իրենց աշխատութիւնը , կը սկսին այլ եւս
համ չառնել իրենց ընտանեկան կեանքէն
քան թէ անոնք որոնք քանի մը օր իրարու
վրայ , կամ օրուան մէջ գոնէ քանի մը ժամեր
տունէն բացակայ կը գտնուին :

Այսինքն երբ Մարիաի գրէր , այնքան գե-
ղեցիկ բացատրութիւններ կրնար գործածել ,
իսկ իր կնոջ հետ խօսած ատեն բնաւ այդ
տեսակ բացատրութիւններու պէտք չէր ու-
նենար : Օր մը , ճիշդ այն միջոցին երբ Աթէն
թերեւս իր գեղեցկագոյն էջը կը գրէր եւ որ

զինքը յետոյ պիտի անմահացնէր , տիկին
Աթէն ներս կը մտնէ սենեակէն . ինչպէս ,
ընդհանրապէս կիները գիտեն այնքան անյար-
մար ատեն ներս մտնել սենեակէն՝ երբ իրենց
ամուսինները աշխատութեան մը վրայ կեդրո-
նացած են : Տիկին Աթէն ներս եկած էր իմացնե-
լու համար իր ամուսնոյն որ ճաշը սովորականէն
մէկ կամ երկու ժամ ուշ պիտի ուտեն ,
անակնկալ պատճառով մը : Աթէնն՝ այն
միջոցին շոգորովին մոռցած էր իր ճաշը եւ
Տիկին Աթէնն զինքը երեւակայութեան շո-
ղապանք բարձրութենէն վար մինչեւ խոհա-
նոց կ'իջեցնէր : Այս է պատճառը որ Աթէնն
այնքան անհաճոյ վարմունք մը ունէր դէպի
իր կինը եւ ոչ դէպի Մարիա : Աթէնն Մա-
րիան տեսած չէր բնաւ , իսկ իր կինը ուզածէն
աւելի տեսած էր : Մարիայի հաշիւները երբեք
չէր մաքրած , իսկ Տիկին Աթէնն ըրած ծախքերը
միշտ հարկադրուած էր վճարել : Անտարակոյս
ճիշդ միեւնոյն պատճառներուն համար էր որ
երբ Տիկին Պայրը՝ իր ամուսնոյն աշխատու-
թեան սենեակի դռան կը դարնէր հարցնելով
թէ « կը խանդարեմ քեզ , Պայրն » . նրա-
զգած բանաստեղծը ներսէն մէկ բառով կը
պատասխանէր .

— Չափազանց :

* * *

Գրական մարդոց խառնուածքը եւ բը-
նոյթը յաճախ դիմացիներուն համար շատ
զրդոյիչ է : Պարզ աշխատաւոր մը կրնայ
պէտք եղած ատեն աշխատել , իսկ հանձարի
տէր մարդիկ աշխատելու համար պէտք ու-
նին տրամադրութեան եւ սկզբնաւորութեան
մտաւոր գրագէտի մը յուզումներու միջո-
ցին , ընտանեկան կեանքը պէտք է խոր
լուծութեան մը մէջ թաղուի , հակառակ պա-
րագային ներշնչումը պիտի խանդարուէր :
Յետոյ , գրագէտի ընտանեկան կեանքին մէջ
օրեր կ'ըլլան ուր թախծոտ լուծիւն մը կը
տիրէ տանը մէջ , եւ տանտիրոջ արամա-
զրութիւնն ալ շատ անհաճոյ է ճաշի սեղա-
նին վրայ : Պատճառը եթէ վնասուի , պիտի
տեսնենք թէ իր աշխատութեան սեղանին
վրայ է :

Հանճարները պաշտօնական կեան-
քէն դուրս իրենց անսեփեւեթութեան մէջ

չատ հաղուադիւտ կերպով այնքան հրապու-
րիչ կ'ըլլան , որքան հմայիչ են անոնք բա-
նաստեղծութեան ծիրանին երբ ուսերնուն
վրայ կրեն :

Ընտանեկան երջանկութիւնը կամ ա-
պերջանկութիւնը այնքան կախում ունի
կնոջմէն որքան այրէն . եւ միջնադարեան
իմաստասիրական միտք մը բնաւ չէր չափա-
զանցէր երբ կ'ըսէր թէ « շատ մը գրագէտ-
ներու կիները առանց կամքի դարձած են ,
անհաճոյ տրամադրութեամբ , անփոյթ , եւ
իրենց ժամանակի բոլոր չափազանցութիւն
ներուն ենթակայ » :

« Որքան հաճելի է , միւս կողմէ , կ'աւել-
ցնէ միեւնոյն իմաստաւէրը « երբ գրագէտի
կինն ալ բոլոր բարի տրամադրութիւնները
ունի եւ կարող է միանգամայն իր ամուսնոյն
օգնել » : Եւ ցոյց կուտայ օրինակ մը , ուր
կինը իր ամուսնոյն բոլոր փափաքները կա-
տարած է : Կնոջ միեւնոյն կարողութիւնները ,
միեւնոյն հակումները եւ միեւնոյն ոգեւորու-
թիւնները գրականութեան համար , միջնադար-
եան այդ գրագէտին ընտանիքը խոճալ ըն-
տանիք մը կը դարձնէին : Կինը հեռու բո-
լորովին , իր ամուսինը աշխատութեան ա-
տեն խանդարելէ , ընդհակառակը կ'ոգեւորէր
զայն երբ անիկայ ինքզինքը յոգնած կը զգար
« Միշտ իրեն քով , միշտ աշխոյժ , եւ միշտ
օգտակար գիրք մը ձեռքին մէջ , ամէն տուն
իր ամուսնոյն կը խոստովանէր թէ ինքը ամէ-
նէն երջանիկ կ'ընէ » : Տասն եւ հինգերորդ
դարու հեղինակները սակայն միշտ հրաւիր-
ուած են զգուշանալ , զուտ գրական ոգեւո-
րութենէ ազդուելով իրենց կինը փնտռելէ :
Նոյն դարու նշանաւոր հեղինակ մը Ֆռան-
սիս Ֆիլէլֆուս այնքան ցանկացող էր յու-
նարէն լեզուն կատարելապէս սովորելու ,
որ զէպի Կոստանդնուպոլիս կը ճամբոր-
դէր , հոն իրեն համար յոյն աղջիկ մը
փնտռելու : Բայց իր կինը կատարար
մէկը ելաւ , եւ այն լեզուն որուն հետ այրը
այնքան կ'ընտելանար , կնոջ այդ բնաւորու-
թեանը երեսն աններգաշնակ լեզու մը կը
գառնար իրեն համար :

Շատ մը գրագէտներ կան եւ եղած են
որոնք իրենց կանանց երեսն երեք չափա-
ուգէին դրել , եւ կամ թէ նորէն առանց

իրենց կանանց չափաի կրնային այնքան գե-
ղեցիկ էջեր արտադրել :

Ալֆոնս Տօտէ որոշած էր ամուսնի մնալ ,
որովհետեւ կը վախնար որ սխալ ամուսնու-
թիւն մը կնքելով իր մտքի կարողութիւնները
կորսնցնէր . բայց յետոյ ծանօթանալով
օրինոց Ժիւլի Ալաուի հետ , որ նմանապէս
գրականութիւնը կը սիրէր եւ միանգամայն
հմայիչ գրող մը եւ քննադատ մըն էր , այլ
եւս միեւնոյն վախը չունեցաւ : Իրենց ամուս-
նութիւնը ցոյց տուաւ թէ յաջողած էին եր-
ջանիկ կենսակցութիւն մը հիմնել , եւ անոնց
երկուքին միեւնոյն աշխատութեան սեղանին
վրայ յակած զուգահեռ տեսքը , ինչ հմայիչ
էջ մըն է իրենց կենսագրութեանը մէջ : Ալ-
ֆոնսի եղբայրը խօսելով Տիկին Ալֆոնս Տօտէի
մասին կ'ըսէ « Եղբորս սրտին լոյսն էր
անիկա , իր հեղինակութիւններուն կարգա-
րդը , եւ իր ներշնչումներուն թաքուն խոր-
հըրդատուն : Եղբորս արտադրածներուն մէջ
էջ մը չի կայ զոր նախապէս Տիկին Տօտէ
աչքէ անցուցած , հպած կամ վերկենդանա-
ցուցած չըլլայ . եւ իր ամուսինն ալ Նապապի
ձօնին մէջ իր կնոջ անձնութիւնը եւ ան-
խոնջ աշխատակցութիւնը կուգէր յայտնել
բայց կինը համաձայն չէր այդ տեսակ ձօնի
մը հրապարակուելուն » : Կը պատմուի թէ
անգամ մը Տօտէ իր կնոջ հետ եղերական
անհամաձայնութիւն մը ունեցած էր որուն առ-
թիւ կ'ըսէր մեծանուն Ֆրանսացի վիպագիրը .
իր կնոջը « Միտքիս , ինձ այնպէս կը թուի թէ
տոյրիս վէպի մէջջ գուրս ինկած էջ մըն է » —
« Աւելի հաւանական է , Ալֆոնս » կը պատա-
խանէր կինը « որ ասիկա սահմանուած ըլլայ
էջ մը կաղմկուել , յետոյ վէպի մը մէջ տեղա-
ւորելու համար » :

Ու այս բոլոր առաւելութիւններով հանդերձ
Սաֆօի հեղինակին կինը տիպար տանախիին
մը եղած է նաեւ : Իրենց տանը մէջ պոհէ-
միտկան անկամսնութիւն մը երբեք կարելի
չէր նշմարել : Բոլոր այցելուները երբ Տօտէի
տունը կը ձգէին , միշտ իրարու կը բացազան-
չէին Տիկին Տօտէն տկնարկելով « Ինչ բա-
նիւրուն կին մը ունի » :

Անդրիտայի մեծ վիպատան Ֆէնիմոր Քու-
րըր գրագէտ կը գառնար իր կնոջ չորհիւ :
Իրիկուն մը , Քուրըր վէպ մը կարգացած ա-
տեն յանկարծ գիրքը կը նետէր ձեռքէն բացա-

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

զանչելով « Ապահով եմ որ ես աւելի աղէկ գիրք մը կրնայի գրել » — « Յոյց առւել ինծի թէ կարող եմ այդ բանը ընել » կը պատասխանէր իր կինը , ժպտալ շրթունքին : Արդէն քիչ օր վերջը Քուրըրը գրած էր գրքի մը քանի մը գլուխները . աւարտելէն վերջը « կանխազգուշութիւն » (precaution) տիպոսով կը հրատարակուէր հեղինակութիւնը : Այս վէպը թէեւ մեծ աւագորութեան մը տեղի չէր տար , բայց առիթը կ'ըլլար , որով Քուրըրը կը գիտակցէր իր վիպագրի կարողութիւններուն եւ առաջինին յաջորդող « Լրտես » անուն վէպը այնքան ոյժով թուոյ կը հանէր իր հայրենակիցներուն ազգասիրական զգացումները , որ Քուրըրի համար մեծ յաջողութիւն մը կ'ըլլար այս :

Հառութօրն ալ , ամերիկացի անուանի գրագէտը իր նշանաւոր նամակները կը գրէր միայն իր կնոջ թեկադրութեանը վրայ : Տիկին Քարլայի եւ ուրիշ անուանի գրագէտներէ ոմանց կիներուն պէս Տիկին Հառութօրն ալ իր տունը այն տեսակ կանոնաւոր վիճակի մէջ կը պահէր որ իր ամուսնոյն մարտողութիւնն ու արտադրութիւնը անհարկի կերպով չէին խանգարուեր : Ու յետոյ որքան զնահատելի էր այս բարի կինը : Այնքան բարութիւն , խանգաղատանք ուներ իր ամուսնոյն համար , որ այս վերջինն ալ բարութիւնէ տարբեր բան մը չէր կրնար ընել իր կնոջը :

Տիկին Հակարտ եւ տիկին Թոմաս Հարտի նմանապէս , գրական մեծ օժանդակներ եղած են իրենց ամուսիններուն :

Մաքս Օ'Րէլ (Բօլ Պուէ) իր գրութիւնները նախ ֆրանսերէն կը գրէր , որոնք յետոյ իր կնոջ ձեռամբ Անգլիերէնի կը թարգմանուէին : Տիկին Մաքս Օ'Րէլ բացի յաջող թարգմանիչ մը ըլլալէ կարող էր նաեւ ամենահամեղ կերակուրները եփել , եւ տիպար հիւրասիրող մըն էր միանգամայն :

Ասոնք միայն քանի մը համրուած պարագաներու եզրակացութիւններն են որոնց հասած է նաեւ անուանի անգլիացի գրագէտ ձէյմս Բայն , որ կ'ըսէ « Ես ճանչցած եմ վրահանութեան բաղձաթիւ եղբայրակիցներ թէ ամուսնացած եւ թէ ամուրի , եւ իմ վարձառութիւնս ինձ յոյս կուտայ թէ ոչ մէկ դատակարգ ամուսնական կեանքէն այնքան օգուտ կրնայ քաղել , որչափ գրականութեան աշխատանքները » :

ԶԻՊԱ , Իգմիր . — Ստացած ենք Ձեր երիտասարդ աղջիկի խոսքը , տանտիկնոջ մասին , ի պատասխան մեր այն հրահրին որով փափաք կը յալտնէինք որպէս գի մեր կիները հրապարակաւ ըսեն քե ի՞նչ կերպով կ'ըմբռնեն հայ տանտիկնոջ դերը ընտանիքի մէջ : Ձեր գրածին մէջ քեեա կը ցուցնէր դիտելու սուր կարողութիւն մը , սակայն աշխարհը դեռ վարդագոյն ապակիներու ետեւէ կը տեսնէք : աշխատեցէք Ձեր մտքի զարգացման գործը յառաջ տանիլ ու ապրեցէք միանգամայն . ու պիտի տեսնէք այն ատեն նոր կետեր , որոնք Ձեր ճիմակուան խոսքի կազմութեանը մէջ չեն կանխատեսուած : Ձեր երեք եջի գրութիւնը մեզ ենթադրել կ'ուտայ քե աշխատելով յաջող գրող մը կրնաք ըլլալ մեր մէջ :

Կ. Փ. — Ստացած ենք Ձեր « կանանց դերը » վերնագրին տակ երկէջեայ յօդուածը : Քիչ տողերու մէջ ուզեր էք յատ բան ըսել . առեյի աղէկ պիտի ըլլար եթէ քիչ բան ըսէիք եւ Ձեր ըսածներուն բոլոր կողմերու մասին մտածելով րսէիք : Ձեր գրածէն կը կռահենք որ պահանջկոտ այր մըն է կանանց դերը որոշողը : Արդեօք դժբաղդ ամուսին մըն էք որ այնքան դժգոհ կ'երեւաք աշխարհի կիներէն :

Թ. Ղ. Ա. Կ. Ի. Յ. , Մարգոն . — Ձեր « Յորդրակ » ներքէն կը տեսնենք քե ինքնուրոյն գրող մը կրնաք ըլլալ : Եթէ երոպական լեզու մը գիտէք կը յանձնարարենք Ձեզ ընթերցում , որքան յաճախ այնքան լաւ :

Ա. Ի. Տ. Ի. Ս. , Տրապիզոն . — Գրելէ առաջ դեռ շատ պետք ունիք ընթերցում : Մեր սկսնակ գրողներուն ամեն կերպով կը յանձնարարենք մեկ անգամ գրելու փոխարէն հարիւր անգամ կարդալ :

ՇԱՀԱՆ , Ստիպուած ենք Ձեզ միեւնոյն բանը ըսել . Ձեր գրածէն կերեւայ քե՝ Ձեր տարիքը եւ զարգացումը դեռ իրենց պատանեկան վիճակին մէջ են : Կարդացէք որ զարգանաք , ապրեցէք որ երիտասարդ ըլլաք , ու անկեց վերջը փորձեցէք նորավէպեր գրել :



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ե Ի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի Բ Ո Պ Ա Յ Ի Ն Ի Ջ Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը

Մ . Ե .



ԱՐՈՒՆԱԿԱՆ, յարա-
տեւ փոփոխութիւն մը,
տիրող պայմաններուն
յարմարելու ճկունու-
թիւն մը և միշտ նոր ծրագիրներ երե-
ւակայելով՝ անոնց գործադրելը 19րդ
դարու քաղաքական ինչպէս անտեսա-
կան կեանքին համար անհրաժեշտ գոր-
ծունէութիւններ են: Եւ այս կրկնակ,
երկայրի գործունէութիւններուն մէջ,
մանաւանդ մեծ պետութիւնները տեն-
դոտ յառում մը ունին ի գլուխ հա-
նելու համար քաղաքական այն տեսակ
բաղադրութիւններ, որոնցմով իրենց՝
ընդհանուր աշխարհի մէջ ունեցած ազ-
դեցութիւնն ու զօրութիւնը աւելի կա-
րեւոր կարող է դառնալ:

Կար ժամանակ մը երբ երբեակ նի-
զակակցութիւնը և Ֆրանսայի ու Ռու-
սիոյ միջեւ կնքուած դաշնակցութիւնը
օրուան նորութիւններն էին, այն ա-
տենուան քաղաքական պահանջներուն
բոլորովին բաւականութիւն տալով. մա-
նաւանդ որ այդ նիզակակցութիւնները
կըլլային այն ամուր թումբերը, որոնց
երկու կողմը մրրկող ազգերու հոտանք-

ները իրարու դէմ չէին ելլեր: Գերմա-
նիա իր երկաթէ նախարարապետի ա-
ռաջնորդութեամբ կը յաջողէր երրեակ
նիզակակցութիւնը կազմել: Միւս կողմէ
Ֆրանսա ալ հետամուտ կ'ըլլար Ռուսիոյ
դաշնակցութիւնը վաստակելու. ատով կը
կարծէր միջոցները ստացած ըլլալու,
որոնցմով պիտի կրնար Գերմանացիներ-
րու տարած յաղթանակին փոխարէն և
Ալզաս Լոռէնի կորուստին վրայ, հիմակ
ալ ինքը Գերմանացիները գրգռել, և
նոր կռուի մը բռնուելով անոնց հետ,
այս անգամ Ռուսիոյ աջակցութեամբը
ջլատել թագաւորութիւններէ և դքսու-
թիւններէ կազմուած Գերմանական կայս-
րութիւնը: Որով այս երկու խումբի նի-
զակակցութիւններուն միջեւ այլ եւս կա-
րելի չէր ըլլար մեծ բաղխումներ երե-
ւակայելը, քանի որ միշտ երկու կող-
մերն ալ հակակշռուած, չպիտի կարո-
ղանային կանխատեսել թէ իրենց մեծ
զոհողութիւններէն յետոյ ինչ պիտի ըլ-
լային իրենց քաղած առաւելութիւն-
ները: Սոյն հինգ պետութիւններուն
հանդէպ Անգլիան ալ կար անգին որ իր
պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողի քա-
ղաքականութեամբը ոչ մէկուն կողմը կը
բռնէր ու ամէնուն ալ կողմը կը բռնէր,
միեւնոյն ատեն յառաջ տանելով իր
տիեզերական քաղաքականութիւնը:

վերջին քառորդ դարու քաղաքականութիւնը եղած է յարատու յարումի և առանց բաղկումի քաղաքականութիւնը որ դեռ մինչեւ այսօր կը տեւէ, ու պիտի տեւէր տակաւին, եթէ Ամերիկա, իր Սպանիոյ վրայ տարած յաղթանակէն ետքը չի յայտնուէր իբր 7րդ մեծ պետութիւն մը, Եւրոպայի վերջին քսան տարուան հաւասարակը՝ ռութիւնը խանգարելով:

Այլեւս ռուս և ֆռանսական ու երբեակ նիզակակցութիւնները գործնական միտք ունեցող քաղաքագէտներու համար կորսնցուցած են իրենց կարելութիւնը, և նոր բաղադրութիւններու պէտք կայ որով կարող ըլլան անսնք ամէնքն ալ, նախ ապահովել իրենց երկրին անդորրութիւնը, ու յետոյ իրենց ժողովուրդներու պահանջներուն համեմատ յառաջ քշել իրենց քաղաքականութիւնը:

Երբ երբեակ նիզակակցութիւնը կը կազմուէր, Ֆրանսա՝ իր Գերմանիոյ դէմ շարժումներուն մէջ շատ կը սեղմուէր, իրեն համար անհրաժեշտութիւն էր Գերմանական նիզակակցութեան դէմ նոր նիզակակցութիւն մը հանելը, և երկար տարիներու աշխատութիւններէ և ջանքերէ ետքը վերջապէս կը կնքուէր Ֆրանս և ռուսական դաշնակցութիւնը:

Մանաւանդ այս վերջին տարիներուն փորձը ցոյց տուաւ որ թէ Ֆրանսայի և թէ Գերմանիոյ կողմէ հաստատուած դաշնակցութիւնները գործունեայ դաշնակցութիւններ չէին և թէ մանաւանդ Ֆրանսայի համար մեծ զոհողութիւններու պէտք կար՝ Ռուսիոյ հետ իր ունեցած կապերը աւելի խնամելու համար:

Այսօր Ֆրանսա համոզուած է որ իր՝ Ռուսիոյ ըրած դարպասը ապարդիւն մնալու դատապարտուած է: Այդ բանը զգաց արդէն ուրիշ պետութիւն-

ներու հետ դժուարութիւններու մէջ ինկած ատեն: Պաշտայի խնդիրն ալ առիթ մըն էր համոզելու համար Ֆռանսան թէ Ռուսիայէն աջակցութիւն մը յուսալը շատ խեղացի բան մը չէ: Մանաւանդ վերջին մէկ երկու տարուան միջոցին ուր գերմանական և անգլիական ազդեցութիւնները սկսած են մեծնալ Բարիզի պաշտօնական շրջանակներուն մէջ, և Ֆրանսայի նոր սերունդը եւս հակում մը կը զգայ դէպի Գերմանիա և Անգլիա, ծնած է այն հաստատ համոզումը թէ այս երկիրները թէ աշխարհազրապէս և թէ ընդհանուր քաղաքականութեամբ աւելի մօտ են Ֆրանսայի, որով աւելի արդիւնաւոր կրնայ ըլլալ դաշնակցութիւն մը այս պետութիւններուն հետ:

Գերմանիոյ ալ խղճմտանքը շատ հանգիստ չերեւիր հանդէպ երբեակ նիզակակցութեան: Երբ երկու տարբեր երկիրներու ժողովուրդները համակրական հակում մը չունին դէպի իրար, որքան ալ այդ երկու երկիրներու քաղաքականութիւնները ջանան իրենց մէջ մերձեցում մը յառաջ բերել, միշտ չի հարթուած բան մը կը մնայ այդ երկու պետութիւններուն միջեւ: Գերմանիա բնաւ չէ սիրուած այսօր Իտալիոյ մէջ: Աւստրիա շատ թուցած կ'երեւնայ երբեակ նիզակակցութեան տրամադրութիւններուն հանդէպ իր պարտաւորութիւնները գործադրելու, եթէ լուրջ պաշտպայ մը ներկայանայ: Ու թէ Իտալիոյ և թէ Աւստրիոյ մօտին Գերմանիա ալ շատ կը տատամսի, մտածելով թէ գործունեայ աջակցութիւն մը պիտի ունենա՞ն, եթէ ինքը մանուածապատ բարդութիւններու մէջ խառնուի:

Ռուսիա և Անգլիա իրենց դաշմութիւններու քաղաքականութեան հետեւանքով անգամ մը իրարու հետ աւելուած, ներկայ ընդհանուր անվստահութեան շրջանին մէջ կարող չեն ապա-

հով կերպով կանխատեսել սյոթերու հաւասարակշռութեան այն փոփոխութիւնը որ ամիջական հետեւանքը պիտի ըլլար իրենց իրարու հետ բաղխելուն:

Անհատներու, ^{*} ^{*} ընկերութիւններու ինչպէս նաեւ ընդհանուր մարդկութեան կեանքին մէջ վայրկեաններ կան որոնք թէեւ անակընկալ բայց ամբողջ շրջանի մը հետեւանքն են ու նաեւ ուղղութիւն տուողը կը դառնան ապագային: Եւրոպական և Ամերիկեան ընդհանուր քաղաքական կեանքին մէջ Մ - Նահանգներու յայտնութիւնը այն մեծ անակընկալն էր, որուն հետեւանքները արդէն սկսած են երեւիլ, ամէնէն աւելի շեշտուած կերպով, աշխարհի ընդհանուր քաղաքականութեան մէջ:

Ոմանք թերեւս կը կարծեն թէ արեւակցական հաշիւները այլ եւս անկարող են իրենց՝ անհատները իրարու կապող այն դերը խաղալու, ինչ դեր որ անոնք կը խաղային նախապատմական ժամանակներու ու նահապետական պայմաններու մէջ: Մէկ կողմէն երբ ազգերու քաղաքականութիւնը օտար ցեղերու միջեւ նիզակակցութիւններ կը կերտէր, արեւակցութիւնն այ յառաջ կը բերէր սլաւներու, գերմաններու և անկլո-սաքսոններու ընկերութիւնները: Յեղբու արեւակցութեան վրայ հիմնուած ընդհանուր աշխարհի քաղաքականութիւն մը ամէն անկեղծ քաղաքագէտներու փափաքած գործունէութիւնը պիտի ըլլար: Բայց նորէն միւս կողմէ, ազգերու նիւթականկեանքը զիւրեք միշտ իրենց սահմաններէն դուրս մղելով ուրիշ ազգերու հետ յարաբեր շփման մը մէջ դնելն, տեղի կրնայ տալ տակաւին այն տեսակ հաշիւներու՝ որոնք թերեւս դեռ չի հարթուած ընդհանուր մարդկային սկզբունքներու անհաստատ ըլլալը ցոյց կուտան: Ու որքան անհաստատ ըլլան ընդհանուր մարդկային սկզբունքները, նոյնքան անհրաժեշտ կը դառնան

այն ամէն փոփոխութիւնները որոնք վայրկեաններու արդիւնք, որոշ վայրկեաններու մէջ ալ բոլորովին կը սրբօրին գոյութենէ:

Եւրոպայի Ֆուանս և Ռուսական ու Երրեակ նիզակակցութիւնները այնչափ խախտած չէին զգացած ինքզինքնին, որչափ այս վերջին մէկ տարուան միջոցին: Ու հիմա կարելի չէ կանխատեսել թէ վաղը իրեն հետ քաղաքական ինչ նոր բաղադրութիւններ պիտի բերէ և կամ եւրոպական երեք ցեղեր, իրենց՝ արդէն սկսած արեւակցական ընթացքը որչափ վստահութեամբ կարող պիտի ըլլան յառաջ տանիլ: Ինչ որ ալ ըլլան վաղուան քաղաքական ուղղութիւնները, կը կարծուի որ Եւրոպայի արդէն գոյութիւն ունեցող նիզակակցութիւնները չեն կրնար երկար ատեն տեւել: Եւրոպայի սկսած քաղաքակրթութիւնը շարունակելու համար միշտ պէտք ունի նոր միջոցներու, նոր յառաջ եկած պահանջներ գոհացնելու համար:

Ֆուանսայի, Անգլիոյ և Գերմանիոյ արտաքին գործոց դիւանատուններուն մէջ, Անգլիոյ Ամերիկայի միջև, վերջապէս իւրաքանչիւր պետութեան դահլիճ միւս պետութիւններու դահլիճներուն հետ բանակցութիւններու մէջ են, ճամբայ մը գտնելու համար, ուրկէ ամէն պետութիւն պիտի կարենար հանգստութեամբ քալել իր ինքնազարգացման և քաղաքակրթողի դերերը կարենալ կատարելու համար:

Չարին գէնընկեցութեան առաջարկը կը կարծեն ոմանք թէ ընդհանուր բարդաւաճման միակ ճամբան է. բայց աւելի յոռետեսներ որոնք աւելի փութառութիւն եւ աւելի ճանաչողութիւն ունին, կ'ըսեն թէ մարդկութիւնը դեռ այդ ընդհանուր ճամբան չէ գտած, ընդհանուր զարգացում մը ապահովելու համար ամէնուն:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Տ ՃԻՎԷԼԷԿԵԼԵՆ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Մեր մէջ սխալ ըմբռնուած է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ բառը, քանի որ բաժանորդները ունինք որոնք չեն ուզեր վճարել: Այս տեսակ բաժանորդներու կը յայտարարենք թէ «Մասիս»ի բաժանորդ կարելի է գրուիլ ԿԱՆԻՒԿ վճարելով միայն:

«ՄԱՍԻՍ» ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՑՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	44 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	22 "
Եռամսեայ	6 " (192 էջ)	11 "

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	54 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	27 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	12 ֆրանք
Վեցամսեայ	12 " (384 էջ)	6 "

«ՄԱՍԻՍ» 2ԵՌԻՒՆ ԿԸ ԵԱԻՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐՇ.

«Մասիս»-ի վերաբերեալ ամեն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել Թերթի տնօրէն-խմբագրին:

ՄՐԵԱՅԷԼ ՇԱՄՏԱՆԺԱՆ

Սթամպոլ, Գապը Ալի ճառտեհի, բիւ 20
Stamboul, Avenue de la S. Porte No 20

Ստացած ենք ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՈՆ, ծագում և կենսագրութիւն, ընտանեաց բարեկամէ մը գրուած տպագրութիւն, վենետիկ Ս. Ղազար. 70 փոքրագիր էջերէ բաղկացած:

Կ. Ս. Իւթիւճեանի թարգմանած գրքերէն հետեւեալները մնացած են և ստոնք ալ սպառելու վրայ:

Թափառական Հրեայ	4	Հատոր գին	50	ղշ.
Ընտանեգուրկ	2	"	"	12 "
Կարմիր մարդոց երգումը	2	"	"	10 "
Ամուսնութիւնք փարիզի	1	"	"	5 "
Սկզբունք Բաղ. Տնտես.	1	"	"	3 "
Պատ. Օրինագիրք	1	"	"	2 "

Կը գտնուին Պարսոյ հայ գլխավաճառաց քով:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԲԻԷԼԵԱՆ

Բերա, Մեծ Փողոց թիւ 200, Կալարա Սերային դիմաց

Կը կատարէ ակռայի վերաբառական և արհեստական ամեն տեսակ գործողութիւն: Ակռայի քաշելը թմրեցուցիչ Դեղերով: Աղքատները ձրի կը դարմանուին:

5-4

ՀԱՐԲՈՒԽ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ



Վերջին քանի մը շաբաթուան միջոցին հարբուխի համաճարակ մը կ'առ Պոլսոյ մէջ. ամէն ընտանիքի մէջ գրեթէ հարբուխ ունեցող մը կը գտնուի: Ուստի յանձնարարենք որ խնամք տարուի ամեն ընտանիքի մէջ Կ. ԵԱՎՐՈՒԷԱՆ և ԻՍՍԳՈՒԷԱՆ վաճառատունէն տուի թէյ ունենալ, որպէս զի ատով միջոց անենան հարբուխի համաճարակին դէմ մաքառ: Յիշեալ վաճառատունէն եղած թէյի բաժակ մը, մը ուժով երբ տաք տաք խմուի, կուրծքը կը կայունէ և ցուրտի դէմ հակազդող միջոց մըն է:

Ուշագրութիւն վաճառատան մարքային:

Վաճառատունը կը գտնուի Ճէլալ պէյ խանին տակ, թիւ 10